ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



6

ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ,
ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ, ԱՌԱՔԵԼ ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

6–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ
2019

ՀՏԴ 373.167.1:27(075.3)
ԳՄԴ 86.37 g72
Ն 152

Դասագրքի խմբագրական և հեղինակային կազմը

Խմբագիր-հեղինակներ՝

Վարդան եպիսկոպոս Նավասարդյան
Վ. Ս. Ղանդիլյան. *պատմաբան*
Ա. Ս. Նազարյան. *պատմական գիտությունների թեկնածու*
Ա. Վ. Գյուլբուդաղյան. *պատմաբան, պատմության ուսուցիչ*

Հայոց եկեղեցու պատմություն: Հանրակրթ. դպր. 6-րդ դաս. դասագիրք
Ն 152 / Վ. Ղանդիլյան և ուրիշներ. - Եր., «Տիգրան Մեծ», 2019. - 88 էջ:

ՀՏԴ 373.167.1:27(075.3)
ԳՄԴ 86.37 g72

ISBN 978-99941-0-607-3

© Հեղինակային խումբ, 2019
© «Տիգրան Մեծ», 2019
© ԴՏՀՏՇՀ, 2019 թ.

Ներածություն

Հայաստանում քրիստոնեությունն ունի շուրջ երկհազարամյա պատմություն: Սկիզբ առնելով Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզության շրջանից՝ Հայ Առաքելական Եկեղեցին միշտ եղել է իր ժողովրդի հետ: Մեր պատմության դժվարին պահերին, երբ չենք ունեցել անկախ պետություն, հայ ժողովուրդն իր եկեղեցու շուրջն է համախմբվել: Ազատագրական պատերազմների ժամանակ նա հանդես է եկել միասնության ու պայքարի կոչով, հաճախ ինքն է կազմակերպել ու գլխավորել այդ պայքարը հանուն հայրենիքի, հանուն ազգի, հանուն քրիստոնեական մեր հավատի:

Պատմական իրադարձությունների բերումով մեր ժողովուրդը սփռվել է աշխարհով մեկ: Տարբեր երկրներում առաջացել են հայկական գաղ-



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

թավայրեր: Հայոց եկեղեցին իր տեղական կառույցների միջոցով աշխարհասփյուռ հայությանը միավորող կամուրջ է հանդիսացել: Այդպես է նաև այսօր:

Հայոց եկեղեցին ստեղծել, պահպանել ու մեզ է հասցրել մշակութային բազմաթիվ արժեքներ, ազգային սովորույթներ, ծեսեր և տոներ:

Անժխտելի է նրա դերը հայ ժողովրդի ազգապահպանության գործում:

Եկեղեցու շնորհիվ քրիստոնեությունը դարձել է հայ մարդու ազգային նկարագրի անբաժանելի մասը:

Քրիստոնեական ընդհանուր եկեղեցու մի մասը լինելով հանդերձ՝ Հայ Առաքելական Եկեղեցին հանդիսանում է իր ժողովրդի հարազատ հոգևոր կառույցը, նրա ազգային եկեղեցին:

Դրա ապացույցն է նաև նրա անվանումը: Պաշտոնապես այն կոչվում է ***Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի****: Գործածական են նաև կրճատ տարբերակները՝* ***Հայ Առաքելական Եկեղեցի*** *կամ* ***Հայոց եկեղեցի****:*

Սիրելի՛ աշակերտներ, այս դասագրքի միջոցով ձեզ ճանաչողական գիտելիքներ կտրվեն Հայ Առաքելական Եկեղեցու վերաբերյալ: Դուք որոշակի պատկերացում կկազմեք նրա կառույցի, արարողակարգի, խորհուրդների և տոների մասին: Միաժամանակ կծանոթանաք քրիստոնեական եկեղեցու հիմնական ուղղություններին: Հետաքրքիր և մատչելի գրված պատմությունները կօգնեն ձեզ հասկանալու եկեղեցական բազմաթիվ հասկացությունների իմաստն ու նշանակությունը:

Հուսով ենք, որ դասագիրքը կհարստացնի ձեր իմացության պաշարը:

Հեղինակներ

ԳԼՈՒԽ 1
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

1. Եկեղեցի

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Երևանում

Ինչ է նշանակում «եկեղեցի»

Առօրյա կյանքում մենք հաճախ ենք լսում կամ օգտագործում «եկեղեցի» բառը: Ձեզանից շատերը, հավանաբար, կարող են ասել, թե ինչ է եկեղեցին: Փորձենք միասին պարզել նրա երկու կարևոր իմաստները:

Եկեղեցի բառը ծագել է հունարեն **էկլեսիա** բառից, որը նշանակում է **հավատացյալների* ժողով, հավաք**: Իսկ Հիսուս Քրիստոսին հավատացողները կոչվում են քրիստոնյաներ: Քրիստոնեական եկեղեցի ասելով հասկանում ենք Քրիստոսին հավատացողների ամբողջությունը կամ հավաքականությունը: Հայտնի է, որ աշխարհում ամենատարածված կրոնը քրիստոնեությունն է: Դա նշանակում է, որ **քրիստոնեական եկեղեցուն** պատկանող մարդիկ՝ քրիստոնյաները, թվով ամենաշատն են աշխարհում:

Եկեղեցի է անվանվում նաև այն շենքը, կառույցը, որտեղ հավաքվում են քրիստոնյաները: Մարդիկ գնում են եկեղեցի աղոթելու, պատարագի, ժամերգության և այլ արարողությունների մասնակցելու համար:

Հայոց եկեղեցի ասելով հասկանում ենք Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների կողմից Հայաստան աշխարհում հիմնադրված եկեղեցին: Հայոց եկեղեցին քրիստոնյա աշխարհում ունի իր կարևոր տեղը, իսկ ազգային կյանքում՝ հայ ժողովրդի անփոխարինելի արժեքներից է:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Քրիստոսի հիմնադրած եկեղեցին

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ

Քրիստոնեական եկեղեցու հիմնադրումն սկիզբ է առնում Հիսուս Քրիստոսից և ապա տարածվում Նրա առաքյալների ու աշակերտների շնորհիվ: Սկզբում Հիսուսի հետևորդների թիվը մեծ չէր՝ **12 առաքյալ** և **72 աշակերտ**: Հիսուս Իրեն համեմատում էր խաղողի որթատունկի, իսկ Իր աշակերտներին՝ այդ որթատունկի ճյուղերի հետ: Նա ասում էր Իր աշակերտներին, որ պիտի հավատարիմ մնան Իրեն, որպեսզի ճյուղավորվեն, աճեն և բազմանան:

Այդ ժամանակից անցել է մոտ երկու հազար տարի: Քրիստոսի հիմնադրած եկեղեցին ճյուղավորվել է ու բազմացել:

Մենք՝ հայերս, քրիստոնյա ժողովուրդ ենք: Քրիստոնյաներ են նաև հույները, իտալացիները, ֆրանսիացիները, անգլիացիները, ռուսները և շատ ուրիշ ժողովուրդներ: *Բոլոր քրիստոնյաները միասին կազմում են քրիստոնեական ընդհանրական եկեղեցին:*

Հոգևորականություն

Տարբեր առիթներով եկեղեցի գնալիս մենք տեսնում ենք եկեղեցական հատուկ հանդերձներով մարդկանց: Նրանք են կատարում եկեղեցական արարողությունները՝ մկրտություն, պսակադրություն, մատուցում պատարագ, ժամերգություն և այլն: Նրանց անվանում են **հոգևորականներ**:

Քրիստոնեության առաջին քարոզիչները Քրիստոսի առաքյալներն ու աշակերտներն էին: Նրանք քարոզեցին քրիստոնեությունն ամենուրեք: Շատ մարդիկ ընդունեցին քրիստոնեությունը, և առաջացան քրիստոնյա հավատացյալների համայնքներ:

Առաքյալները նշանակեցին համայնքների առաջնորդներ: Նրանք դարձան քրիստոնեությունն ուսուցանող, համայնքի խնդիրները հոգացող և արարողությունները կատարող սպասավորներ: Նրանց նշանակումը կատարվում էր հատուկ արարողությամբ, որի ժամանակ առաքյալն իր ձեռքը դնում էր ապագա հոգևորականի գլխին: Այդ արարողությունը ստացավ **ձեռնադրություն** անունը:



Ս. Թադեոսի վանքը Իրանում XV-XIX դդ.

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Եկեղեցին որպես շինություն

Աղոթելու, պատարագին մասնակցելու և այլ արարողությունների համար քրիստոնյաները հավաքվում են հատուկ այդ նպատակով կառուցված շինություններում: Այդ շինությունները նույնպես կոչվում են **եկեղեցի**: Եկեղեցին համարվում է **Աստծու տուն**:

Եկեղեցին այլ կառույցներից տարբերվում է իր արտաքին և ներքին տեսքով: Եկեղեցին օծվում* ու սրբագործվում է, և դրանից հետո միայն այնտեղ կարելի է արարողություններ կատարել:

Հայաստանի նշանավոր եկեղեցիներից են **Սուրբ Էջմիածինը**, Երևանի **Սուրբ Սարգիսը**, **Սուրբ Գրիգոր Լուսավորիչը** և այլն: Մեր հայրենիքում պահպանվել են հնում կառուցված հարյուրավոր եկեղեցիներ, որոնց մեծ մասն այսօր գործում* է: Վերջին տարիներին նույնպես կառուցվել կամ վերանորոգվել են բազմաթիվ եկեղեցիներ:

Կեչառիսի վանական համալիր

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ումի՞ց է սկիզբ առնում քրիստոնեական եկեղեցու հիմնադրումը:
2. Հիշենք դասի մեջ թվարկված քրիստոնյա ժողովուրդների անունները:
3. Ինչի՞ համար է նախատեսված եկեղեցական շինությունը:
4. Հայաստանի հայտնի ի՞նչ եկեղեցիներ կարող եք նշել:

8 von 90 16.02.2021, 11:04



բ) Յուրացնենք նոր բառերը և հասկացությունները

1. Ո՞ր բառից է ծագել և ի՞նչ է նշանակում «եկեղեցի»:
2. Ովքե՞ր են հոգևորականները:
3. Ի՞նչ է ձեռնադրությունը:

գ) Առաջադրանքներ

1. Երբևէ եղե՞լ եք եկեղեցում: Պատմե՛ք, թե ինչ տպավորություն եք ստացել:
2. Փորձե՛ք պարզել՝ ձեր բնակավայրում կա՞ն հնում կառուցված և նորակառույց եկեղեցիներ: Գործո՞ղ են դրանք, թե՞ ոչ:
3. Ձեր ուսուցչի կամ դասղեկի հետ այցելե՛ք մոտակա եկեղեցի: Ծանոթացե՛ք այդ եկեղեցու պատմությանը, ճշտե՛ք եկեղեցու անունը: Ի՞նչ նոր բան սովորեցիք:

Հարստացնենք մեր բառապաշարը

Եկեղեցի, հավատացյալ, քրիստոնեական եկեղեցի, ձեռնադրություն, հոգևորական, պատարագ, առաքյալ, օծել, սրբագործել, գործող եկեղեցի:

Բառարան

Պատարագ – եկեղեցական արարողություն, որի ժամանակ կատարվում է Հաղորդության խորհուրդը:

ժամերգություն – եկեղեցում օրվա տարբեր ժամերին կատարվող ամենօրյա աղոթքի ծիսական արարողություն:

Եկեղեցի օծել – եկեղեցու հիմքի քարերի, սյուների, խաչերի, խորանում տեղադրված սեղանի վրա մեռոնով հատուկ արարողություն կատարել: Մեր եկեղեցիների օծումը կատարում է կաթողիկոսը կամ եպիսկոպոսը:

Գործող եկեղեցի – օծված եկեղեցի, որտեղ հոգևորականների կողմից կատարվում են տարբեր արարողություններ:

Հավատացյալ – այստեղ՝ քրիստոնեական եկեղեցու անդամ:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

2. Քրիստոնեական եկեղեցու հիմնական ուղղությունները

Եկեղեցիների հիմնադրումը առաքյալների կողմից

Նոր Կտակարանից մեզ արդեն հայտնի է, որ Հիսուս Քրիստոս համբարձվելուց առաջ առաքյալներին պատվիրել էր գնալ աշխարհի չորս կողմերը, ուսուցանել ու մկրտել բոլոր ժողովուրդներին: Դրանից հետո առաքյալները մեկնեցին տարբեր ուղղություններով, եղան բազմաթիվ երկրներում: Նրանք տարածեցին և քարոզեցին իրենց *Ուսուցչի պատվիրանները* Հռոմեական կայսրության ողջ տարածքում, Միջագետքում, Պարսկաստանում, Հնդկաստանում և այլուր:

Առաքյալներից **Ս. Թադեոսն ու Ս. Բարդուղիմեոսը** եկան **Հայաստան** և քրիստոնեական համայնքներ հիմնադրեցին Հայոց երկրում:

Տիեզերական ժողովներ: Տարբեր ուղղությունների առաջացումը

Առաքյալների գործը շարունակեցին նրանց հաջորդները: Աստիճանաբար քրիստոնեությունը մեծ տարածում գտավ բազմաթիվ երկրներում:

Այդ երկրներում ստեղծված եկեղեցիների հոգևոր առաջնորդները ժամանակ առ ժամանակ հավաքվում էին տարբեր հարցեր քննարկելու նպատակով: Եկեղեցական այդ հավաքներից ամենակարևորները կոչվեցին **տիեզերական** (ընդհանուր) **ժողովներ:**

Քրիստոնեական եկեղեցու համար մեծ նշանակություն են ունեցել առաջին երեք տիեզերական ժողովները: Դրանք տեղի են ունեցել Նիկեա (325 թ.), Կոստանդնուպոլիս (381 թ.) և Եփեսոս (431 թ.) քաղաքներում: Այդ տիեզերական ժողովների որոշումները պարտադիր էին բոլոր եկեղեցիների համար:

Ժամանակի ընթացքում քրիստոնեական եկեղեցու մեջ տեղի ունեցան բաժանումներ, ձևավորվեցին տարբեր ուղղություններ:

Նիկեայի տիեզերական ժողովը 325 թ.

10 von 90 16.02.2021, 11:04

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ

Առաջին մեծ բաժանումը տեղի ունեցավ **451 թվականի** Քաղկեդոնի տիեզերական ժողովից հետո: Քրիստոնեական եկեղեցին բաժանվեց երկու ուղղությունների՝ քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական (կամ արևելյան ուղղափառ):

Երկրորդ մեծ բաժանումը տեղի ունեցավ **1054 թվականին**, երբ քաղկեդոնական ուղղությունը բաժանվեց երկու մասի, և առաջացան բյուզանդական օրթոդոքս ու լատին կաթոլիկ եկեղեցիները:

Այսօր քրիստոնեական եկեղեցական հիմնական ուղղություններն են՝ *արևելյան ուղղափառ, օրթոդոքս բյուզանդական, կաթոլիկ և բողոքական:*

Արևելյան ուղղափառ եկեղեցի

Հայոց և արևելյան մի խումբ եկեղեցիներ մերժեցին Քաղկեդոնի ժողովի որոշումները և հավատարիմ մնացին առաջին երեք տիեզերաժողովների որոշումներին: Հետագայում նրանք կոչվեցին արևելյան ուղղափառ (ոչ քաղկեդոնական) եկեղեցիներ՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, Ղպտի Ուղղափառ Եկեղեցի, Եթովպական Ուղղափառ Եկեղեցի, Ասորի Ուղղափառ Եկեղեցի և Հնդկաստանի Ս. Թովմայի Մալանկարա Ուղղափառ Եկեղեցի:

Օրթոդոքս եկեղեցիներ

Քրիստոնեական եկեղեցու երկրորդ մեծ բաժանումից հետո **Բյուզանդական եկեղեցին** և նրա կողմնակիցներն իրենց անվանեցին օրթոդոքս եկեղեցի: **Օրթոդոքսը** հունարեն բառ է, որը նշանակում է ուղղափառ, այսինքն՝ *ճշմարիտ* կամ *ուղիղ հավատի հետևորդ:*

Օրթոդոքս ժողովուրդներ են հույները, ռուսները, սերբերը, բուլղարները, ռումինացիները և ուրիշներ:

Այսօր գոյություն ունեցող օրթոդոքս եկեղեցիներից յուրաքանչյուրն ունի իր հոգևոր առաջնորդը: Օրթոդոքս եկեղեցու

Օրթոդոքս եկեղեցու Տիեզերական պատրիարք Բարդուղիմեոս Ա

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

ընդհանրական առաջնորդը Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքն է: Օրթոդոքս երկրներից յուրաքանչյուրն ունի իր հոգևոր առաջնորդը, ով կրում է պատրիարք, արքեպիսկոպոս կամ մետրոպոլիտ տիտղոսը: **Պատրիարք** նշանակում է **եպիսկոպոսապետ** կամ **հայրապետ**: Օրինակ՝ Ռուսական եկեղեցու առաջնորդը կոչվում է Համայն Ռուսիայի պատրիարք, Կիպրոսինը՝ Կիպրոսի արքեպիսկոպոս և այլն:

Հռոմի պապ Ֆրանցիսկոս

Կաթոլիկ եկեղեցի

Այս ուղղությունն իր անունն ստացել է լատիներեն **կաթոլիկ** բառից, որը նշանակում է **տիեզերական**, **ընդհանուր**: 1054 թվականի բաժանումից հետո այդպես կոչվեց **Հռոմեական լատին եկեղեցին**:

Կաթոլիկ ժողովուրդներ են իտալացիները, իսպանացիները, ֆրանսիացիները, պորտուգալացիները, լեհերը և ուրիշներ: Կաթոլիկներ կան նաև հայերի մեջ: Նրանք հիմնականում բնակվում են Հայաստանի Հանրապետության հյուսիսային շրջաններում, Ջավախքում, ինչպես նաև սփյուռքում:

Կաթոլիկ եկեղեցիների հոգևոր և վարչական **գերագույն առաջնորդը Հռոմի պապն** է: Կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները կոչվում են **կարդինալներ**: Նրանք են ընտրում Հռոմի պապին:

Հռոմի պապի նստավայրը՝ **Վատիկանը**, գտնվում է Իտալիայի մայրաքաղաք Հռոմում: Վատիկանը ինքնուրույն քաղաք-պետություն է, որի ղեկավարը նույնպես Հռոմի պապն է:



Հայկական բողոքական եկեղեցի Բեյրութում

Բողոքական եկեղեցի

Այս ուղղությունն իր անվանումն ստացել է **բողոք** բառից: XVI դարում կաթոլիկ եկեղեցու դեմ բողոքի շարժում սկսեցին Գերմանիայի, Շվեյցարիայի և Անգլիայի տեղական եկեղեցիները: Նրանք *բողոքում, դժգոհում էին* Հռոմի պապի իշխանությունից և գտնում էին, որ կաթոլիկ եկեղեցին շեղվել

12 von 90 16.02.2021, 11:04

է Ավետարանի սկզբունքներից: Այդ եկեղեցիներն առանձնացան կաթոլիկ եկեղեցուց: Հռոմից առանձնացած եկեղեցիներն ստացան **բողոքական** կամ **ավետարանական** անվանումը:

Առավել հայտնի են բողոքական հետևյալ ուղղությունները՝ **Լութերական**, **կալվինական, ավետարանական, մկրտչական** և այլն: Նրանք միմյանցից տարբերվում են իրենց ղեկավարման, արարողությունների կատարման ձևով: Բողոքական ուղղության մեջ առանձնահուկ տեղ է զբաղեցնում անգլիկան եկեղեցին:



Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ի՞նչ էր պատվիրել Հիսուս առաքյալներին:
2. Ե՞րբ են տեղի ունեցել առաջին երեք տիեզերական ժողովները:
3. 451 թ. և 1054 թ. բաժանումներով քրիստոնեության մեջ ի՞նչ հիմնական ուղղություններ ձևավորվեցին:
4. Արևելյան ուղղափառ ի՞նչ եկեղեցիներ գիտեք:
5. Ովքե՞ր են Հայոց եկեղեցու հիմնադիրները:
6. Ինչպե՞ս է կոչվում օրթոդոքս եկեղեցիների հոգևոր պետը:
7. Ո՞վ է Հռոմի պապը:
8. Որտե՞ղ է Հռոմի պապի նստավայրը:
9. Ե՞րբ են առաջացել բողոքական եկեղեցիները:

բ) Յուրացնենք նոր բառերը և հասկացությունները

1. Ի՞նչ է նշանակում առաքելական եկեղեցի:
2. Ի՞նչ է տիեզերական ժողովը, ի՞նչ նպատակով էին դրանք գումարվում:
3. Ո՞ր բառերից են առաջացել ուղղափառ, կաթոլիկ և բողոքական անվանումները:

գ) Առաջադրանք

Տետրում գծե՛ք և լրացրե՛ք հետևյալ աղյուսակը:

Քրիստոնեության հիմնական ուղղությունները	Անվանման բացատրությունը	Առաջացման ժամանակը

Հարստացնենք մեր բառապաշարը

Տիեզերական ժողով, արևելյան ուղղափառ եկեղեցի, օրթոդոքս եկեղեցի, պատրիարք, արքեպիսկոպոս, մետրոպոլիտ, Հռոմի պապ, Վատիկան, կարդինալ, բողոքական եկեղեցի:

14 von 90 16.02.2021, 11:04

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

*Հայաստանն աշխարհում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակած առաջին պետությունն է: **301 թվականին Տրդատ III Մեծ թագավորի և Գրիգոր Լուսավորչի** շնորհիվ քրիստոնեությունը մեր երկրում ընդունվել է որպես պետական կրոն: **Հայոց եկեղեցու առաջին կաթողիկոս** Ս.Գրիգոր Լուսավորչի և նրա հաջորդների օրոք ձևավորվել են **Հայ Առաքելական եկեղեցու** նվիրապետությունը և վարչական կառույցը: Հետագա դարերում, պատմական դեպքերի հետ կապված, դրանք որոշակի փոփոխություններ են կրել:*

3. Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետությունը

Ինչ է նվիրապետությունը

Նախորդ դասերից դուք որոշակի պատկերացում կազմեցիք եկեղեցու և հոգևորականության մասին, իմացաք, որ հոգևորականները եկեղեցու սպասավորներ են: Նրանք ունեն հոգևոր աստիճաններ և կոչված են տարբեր ծառայությունների:

Հոգևոր աստիճանների ամբողջական համակարգը կոչվում է **նվիրապետություն**:

Նվիրապետական աստիճանները

Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետությունը, սկիզբ առնելով Գրիգոր Լուսավորչի ժամանակից, հետագայում որոշ փոփոխություններ է կրել: Ավելացել են նոր կոչումներ և աստիճաններ:

Այսօր Հայոց եկեղեցում կա **նվիրապետական 9 աստիճան**:

Ամենաբարձր աստիճանը **կաթողիկոսությունն է**: Դրան նախորդում է **եպիսկոպոսությունը**, ապա՝ **քահանայությունը**: Այս երեքը կոչվում են *նվիրապետական բարձր աստիճաններ:*

Քահանայությունից ցածր կան **վեց աստիճաններ**՝ սարկավագ, դպիր և այլն:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի աջը

Աստիճանների շնորհումը կատարվում է հաջորդական կարգով՝ ցածրից դեպի բարձրը:

Հոգևորականների մի մասը **կուսակրոն** է, մյուսները՝ ոչ կուսակրոն (ամուսնացած): Կուսակրոն են անվանում այն հոգևորականներին, ովքեր հրաժարվում են ամուսնությունից և ուխտ կապում անմնացորդ ծառայելու եկեղեցուն:

Ամենայն Հայոց կաթողիկոսի խորհրդանիշը

Կաթողիկոս

Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր բարձրագույն պաշտոնյան **կաթողիկոսն է**: Կաթողիկոս նշանակում է ընդհանուր և գերագույն պետ: Կաթողիկոսին տրվում են նաև հայրապետ, եպիսկոպոսապետ, քահանայապետ տիտղոսները:

Ամենայն Հայոց կաթողիկոսը հայ ժողովրդի հոգևոր առաջնորդն է: Կաթողիկոսը հրավիրում է եկեղեցական ժողովներ, հաստատում նոր թեմեր*, ձեռնադրում եպիսկոպոսներ, օրհնում սուրբ մեռոնը* և այլն: Հին ժամանակներում կաթողիկոսն էր օծում Հայոց թագավորին:

Հայրապետական գավազան

Ամենայն Հայոց կաթողիկոս են ընտրում, սովորաբար, եպիսկոպոսներից: Ընտրությունը կատարում է **Ազգային-եկեղեցական ժողովը**: Այդ ժողովին մասնակցում են Հայաստանի ու Սփյուռքի հայկական համայնքների հոգևորական և աշխարհիկ պատգամավորներ: Ընտրությունը տեղի է ունենում **Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում**: Ընտրությունից հետո Մայր տաճարում տեղի է ունենում կաթողիկոսի ձեռնադրման և օծման հանդիսավոր արարողությունը: Այդ արարողությունը կատարում են 12 եպիսկոպոսներ:

1999 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Գարեգին Բ Ներսիսյանը: Վեհափառ Հայրապետը մեր եկեղեցու 132-րդ կաթողիկոսն է:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Եպիսկոպոս

Եպիսկոպոս բառացի նշանակում է **վերատեսուչ**: Նա թեմի առաջնորդն է ու հսկիչը: Եպիսկոպոսն իրավունք ունի ձեռնադրել քահանաներ, սարկավագներ, դպիրներ և կատարել բոլոր խորհուրդները:

Եկեղեցում մեծ վաստակ ունեցող եպիսկոպոսներին կաթողիկոսը շնորհում է արքեպիսկոպոսի տիտղոս:

Եպիսկոպոսական հանդերձ

Քահանա

Քահանան եկեղեցու կարևոր պաշտոնյաներից է: Նա է հիմնականում կատարում եկեղեցական ծեսերն* ու արարողությունները: Օրինակ՝ քահանան մկրտում է, պսակի արարողություն կատարում, պատարագ մատուցում: Քահանաների մի մասը կուսակրոն է: Կուսակրոնություն ընդունած քահանային անվանում են **աբեղա**:

Քահանայական թագ

Վարդապետ

Հայ Առաքելական Եկեղեցին ունի նաև վարդապետության աստիճան: Այն որպես գիտական աստիճան շնորհվում է աբեղային: **Վարդապետ** նշանակում է **ուսուցիչ**: Նա ուսումնասիրում և ուսուցանում է Աստվածաշունչը, բացատրում եկեղեցական կանոնները, ծեսերը: Միաժամանակ նա կարող է զբաղեցնել եկեղեցական պաշտոններ:

Վարդապետական թագ

17 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է աշխարհում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած առաջին պետությունը:
2. Ե՞րբ է քրիստոնեությունը մեր երկրում հռչակվել որպես պետական կրոն:
3. Նվիրապետական քանի՞աստիճան ունի Հայ Առաքելական Եկեղեցին:
4. Ո՞րն է նվիրապետական ամենաբարձր աստիճանը:
5. Ո՞ւմ են անվանում կուսակրոն հոգևորական:
6. Ամուսնացած հոգևորականները մինչև ո՞ր աստիճանը կարող են ստանալ:
7. Ովքե՞ր են ձեռնադրում կաթողիկոսին:
8. Որտե՞ղ է անցկացվում Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը, ձեռնադրությունը և օծումը:
9. Ո՞վ է ներկայիս Ամենայն Հայոց կաթողիկոսը:
10. Ի՞նչ աստիճան է վարդապետությունը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Նվիրապետություն, կուսակրոն, Ազգային-եկեղեցական ժողով, կաթողիկոս, արքեպիսկոպոս, եպիսկոպոս, վարդապետ, աբեղա, քահանա:

Բառարան

Թեմ – եկեղեցու տարածքային-վարչական միավոր:

Ծես – եկեղեցում որոշակի կանոնակարգով կատարվող արարողությունների ամբողջությունը:

Մեռոն (մյուռոն) – եկեղեցական արարողությունների ժամանակ օգտագործվող անուշաբույր հեղուկ. պատրաստվում է եկեղեցական հատուկ արարողակարգով:

Լրացուցիչ նյութ

ԻՆՉՊԵՍ ՈՂՋՈՒՆԵԼ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայ Առաքելական Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներին ողջունելու հետևյալ կարգն է ընդունված.

Կաթողիկոսին՝ Աստված օգնական, Վեհափա՛ռ տեր:

Եպիսկոպոսին՝ Աստված օգնական, սրբազա՛ն հայր:

Աբեղային և **վարդապետին՝** Աստված օգնական, հա՛յր սուրբ:

Քահանային՝ Օրհնեցե՛ք, տե՛ր հայր:

18 von 90 16.02.2021, 11:04

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

Աղոթելիս չլինե՛ս կեղծավորների նման, որոնք սիրում են հրապարակնե-րում աղոթել, որպեսզի մարդիկ տեսնեն ...

Աղոթելիս շատախոս մի՛ եղիր և մի՛ կարծիր, որ շատ խոսքերի համար լսելի կլինես ...

(տողեր Նոր Կտակարանից)

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ
ՀԱՅՐ ՄԵՐ

Հայր մեր, որ երկնքում ես,
Թող սուրբ լինի Քո անունը,
Թող գա Քո արքայությունը,
Թող Քո կամքը լինի
Ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա:
Մեր հանապազօրյա հացը
Տուր մեզ այսօր,
Եվ թող մեզ մեր պարտքերը,
Ինչպես մենք ենք թողնում մեր
պարտապաններին:
Եվ մի՛ թող մեզ փորձության մեջ,
Այլ փրկիր մեզ չարից,
Որովհետև Քոնն է արքայությունը և
զորությունը,
Եվ փառքը, հավիտյանս. ամեն:

Հայր մեր, որ յերկինս ես,
Սուրբ եղիցի անուն Քո,
Եկեսցէ արքայութիւն Քո,
Եղիցին կամք Քո՝
Որպես յերկինս և յերկրի:
Զհաց մեր համապազորդ
Տուր մեզ այսօր,
Եւ թող մեզ զպարտիս մեր,
Որպես եւ մեք թողումք մերոց
պարտապանաց:
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
Այլ փրկեա զմեզ ի չարէ,
Զի Քո է արքայութիւն և զօրութիւն
Եւ փառք յաւիտեանս, ամեն:*

***Գրաբարում կարդում ենք –**

ա. բառասկզբում Յ=Հ: Օրինակ՝ յաւիտեան=հավիտյան
բ. բառասկզբում՝ բաղաձայնից առաջ՝ Զ=ԸԶ: Օրինակ՝ զհաց=ըզհաց
գ. Ի երկհնչյունը՝ ՅՈՒ: Օրինակ՝ փորձութիւն=փորձություն
դ. ԵԱ երկհնչյունը՝ ՅԱ: Օրինակ՝ յաւիտեան=հավիտյան
ե. բառավերջի ձայնավորից հետո յ-ն չի կարդացվում:
Օրինակ՝ Աստուծոյ=Աստուծո:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

4. Հայ Առաքելական Եկեղեցու վարչական կառույցը

Հայ Առաքելական եկեղեցու թեմերը

Հայ Առաքելական եկեղեցին տարածքային-վարչական միավորներ ունի Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և սփյուռքահայ գաղթավայրերում: Ժամանակի ընթացքում փոխվել են այդ միավորների անվանումները, դրանց քանակը և առաջնորդների նստավայրերը:

Վարչական ամենամեծ միավորը **թեմն** է: Թեմի առաջնորդին (վարդապետ կամ եպիսկոպոս) նշանակում է Ամենայն Հայոց կաթողիկոսը կամ ընտրում է թեմական խորհուրդը: Առաջնորդն իր թեմում ձեռնադրում է քահանաներ, հրավիրում թեմական խորհուրդ, իրականացնում հոգևոր-եկեղեցական, մշակութային, կրթական գործունեություն և այլն:

Հայաստանի Հանրապետությունում գործում է Հայ Առաքելական եկեղեցու 11 թեմ: Դրանք են՝ **Արարատյան Հայրապետական, Շիրակի, Արթիկի, Սյունյաց, Վայոց ձորի, Արմավիրի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Գուգարքի, Տավուշի** և **Կոտայքի** թեմերը:

20 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Արարատյան թեմի առաջնորդը Ամենայն Հայոց կաթողիկոսն է, որի համար էլ այն կոչվում է Հայրապետական թեմ: Թեմի առաջնորդական նստավայրը Երևանի Ս. Սարգիս եկեղեցին է: Արարատյան հայրապետական թեմում Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից նշանակվում է առաջնորդական փոխանորդ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործում է **Արցախի թեմը**:

Սփյուռքում գործող տարածքային կառույցներից հայտնի են Նոր Նախիջևանի և Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ավստրալիայի, Կանադայի, ԱՄՆ-ի Արևելյան ու Արևմտյան հայոց թեմերը և ուրիշներ:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա

Վարչական գերագույն իշխանությունը

Հայոց եկեղեցու վարչական և հոգևոր գերագույն իշխանությունը **Ամենայն Հայոց Կաթողիկոսությունն է՝** Ամենայն Հայոց կաթողիկոսի գլխավորությամբ: Ամենայն Հայոց կաթողիկոսի **նստավայրը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը**, գտնվում է Վաղարշապատում:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս

Հայոց եկեղեցու պատմականորեն ձևավորված նվիրապետական մյուս աթոռները

Պատմական պայմանների բերումով այսօր Հայաստանից դուրս գործում են Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական երեք աթոռներ՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունները:

Երուսաղեմի հայոց պատրիարք Նուրհան արքեպիսկոպոս

21 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը հիմնադրվել է 1446 թ. Կիլիկիայի Սիս քաղաքում: 1930 թվականից Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական նստավայրը (Աթոռը) գտնվում է **Անթիլիասում** (Բեյրութ, Լիբանան):

Երուսաղեմի հայոց պատրիարքությունը հիմնադրվել է **638 թվականին**: Պատրիարքությունը զբաղեցնում է 150 հազար քառ. մետր տարածք **Երուսաղեմի** հին թաղամասերից մեկում, Սիոն լեռան մոտ:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը հիմնադրվել է 1461 թվականին: Պատրիարքի աթոռանիստը գտնվում է **Ստամբուլում** (նախկին՝ **Կոստանդնուպոլիս**):

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ո՞րն է Հայ Առաքելական Եկեղեցու վարչական ամենամեծ միավորը:
2. Ո՞վ կարող է ընտրվել թեմի առաջնորդ:
3. Քանի՞ թեմ կա Հայաստանի Հանրապետությունում: Որո՞նք են դրանք:
4. Ինչո՞ւ է Արարատյան թեմը կոչվում Հայրապետական:
5. Սփյուռքի քանի՞ թեմ կարող եք թվարկել:
6. Ի՞նչ տարածք է ընդգրկում Արցախի թեմը:
7. Ո՞րն է Հայոց եկեղեցու վարչական և հոգևոր գերագույն իշխանությունը:
8. Որտե՞ղ է գտնվում Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրը:
9. Որո՞նք են Հայ Առաքելական Եկեղեցու պատմականորեն ձևավորված երեք նվիրապետական աթոռները: Ե՞րբ են դրանք հիմնադրվել:

բ) Առաջադրանք

Տետրի մեջ ինքնուրույն գծե՛ք Հայաստանի քարտեզը և նշե՛ք Հայ Առաքելական Եկեղեցու թեմերը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Ամենայն Հայոց Կաթողիկոսություն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Երուսաղեմի հայոց պատրիարքություն, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն, նվիրապետական աթոռ:

22 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Լրացուցիչ նյութ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԹԵՄԵՐԻ ՄԱՍԻՆ

1996 թվականից ՀՀ տարածքը բաժանված է հետևյալ թեմերի.

1. Արարատյան հայրապետական թեմ – ընդգրկում է Երևան քաղաքը և Արարատի մարզը: Թեմի առաջնորդը Ամենայն Հայոց կաթողիկոսն է: Առաջնորդանիստը Երևանի Ս. Սարգիս եկեղեցին է:

2. Շիրակի թեմ – ընդգրկում է Շիրակի մարզի մեծ մասը: Առաջնորդանիստը Գյումրիի Յոթվերք Ս. Աստվածածին եկեղեցին է:

3. Արթիկի թեմ – ընդգրկում է Արթիկի վարչական շրջանը: Առաջնորդանիստը Արթիկի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է:

4. Սյունյաց թեմ – ընդգրկում է Սյունիքի մարզը: Առաջնորդանիստը Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է:

5. Վայոց ձորի թեմ – ընդգրկում է Վայոց ձորի մարզը: Առաջնորդանիստը՝ Եղեգնաձորի Ս. Աստվածածին եկեղեցին է:

6. Արմավիրի թեմ – ընդգրկում է Արմավիրի մարզը: Առաջնորդանիստը Բամբակաշատի Ս. Աստվածածին եկեղեցին է:

7. Գեղարքունիքի թեմ – ընդգրկում է Գեղարքունիքի մարզը: Առաջնորդանիստը Գավառի Ս. Աստվածածին եկեղեցին է:

8. Արագածոտնի թեմ – ընդգրկում է Արագածոտնի մարզը: Առաջնորդանիստը Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին է:

9. Գուգարքի թեմ – ընդգրկում է Լոռու մարզը: Առաջնորդանիստը Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցին է:

10. Տավուշի թեմ – ընդգրկում է Տավուշի մարզը: Առաջնորդանիստը Իջևանի Ս. Ներսես Շնորհալի եկեղեցին է:

11. Կոտայքի թեմ – ընդգրկում է Կոտայքի մարզը: Առաջնորդանիստը Ծաղկաձորի Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է:

Հարցեր լրացուցիչ նյութի վերաբերյալ

1. Ո՞ր թեմի տարածքում է գտնվում ձեր բնակավայրը:
2. Ո՞վ է թեմի առաջնորդը:

23 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

5. Հայկական եկեղեցիների կառուցվածքը

Հայաստանում եկեղեցական առաջին շինությունները հիմնադրվել են քրիստոնեությունը Հայաստան մուտք գործելուց անմիջապես հետո: Այդ ժամանակից սկսած մեր երկրում կառուցվել և հիմա էլ կառուցվում են բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր*:

Այժմ ծանոթանանք եկեղեցական շինության արտաքին և ներքին մասերին, որի շնորհիվ կիմանանք նաև, թե դրանք ինչ նպատակի են ծառայում:

Աշտարակի Կարմրավոր կամ Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 7-րդ դարում

Արտաքին կառուցվածքը

Հայկական եկեղեցիներն աչքի են ընկնում իրենց ուրույն ճարտարապետական տեսքով: Ավանդաբար եկեղեցիներն ունեն **ուղղանկյուն** կամ **խաչաձև** կառուցվածք: Շինության կենտրոնական մասում վեր է խոյանում գեղանիստ **գմբեթը**, որի վրա կան լուսամուտներ: Եկեղեցիները լինում են նաև առանց գմբեթի (բազիլիկ):

Եկեղեցու վրա միշտ **խաչ** է դրվում:

Ներքին կառուցվածքը

Ներսի մասում եկեղեցին ունի **սրահ, ատյան** և **բեմ**:

Աղոթելու համար սրահում են հավաքվում հավատացյալները:

Սրահից հետո եկեղեցու արևելյան մասում գտնվում է ատյանը, որտեղ արարողությունների ժամանակ կանգնում են հոգևորականները: Ատյանի հյուսիսային կողմում գտնվում է մկրտության ավազանը, իսկ արևելյան կողմում՝ բեմը կամ **խորանը:** Խորանի կենտրոնում տեղադրված է **պատարագի սուրբ սեղանը:**



Ս. Էջմիածնի Մայր տաճարի գմբեթի ներքին նկարազարդումը

24 von 90 16.02.2021, 11:04

Եկեղեցիներում կան նաև **ավանդատներ**, որոնք գտնվում են բեմի աջ և ձախ կողմերում: Այդտեղ են պահվում եկեղեցական իրերը (սպասք, զարդեր և այլն):

Եկեղեցի կառուցելիս կատարվում է **հիմնօրհնեքի** արարողություն: Շինարարության ավարտից հետո նորակառույց եկեղեցին օծվում է, որից հետո այն դառնում է գործող եկեղեցի:



Հայկական եկեղեցու հատակագիծ

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ե՞րբ են հիմնադրվել հայկական առաջին եկեղեցիները:
2. Ի՞նչ կառուցվածք ունեն հայկական եկեղեցիները:
3. Եկեղեցու ո՞ր մասում է գտնվում բեմը:
4. Որտե՞ղ է տեղադրված պատարագի սուրբ սեղանը:
5. Եկեղեցու ո՞ր մասում է գտնվում մկրտության ավազանը:
6. Ե՞րբ է նորակառույց եկեղեցին դառնում գործող:

բ) Առաջադրանքներ

1. Նկարագրե՛ք ձեր բնակավայրի եկեղեցու արտաքին և ներքին կառուցվածքը:
2. Համեմատե՛ք այն դասագրքում տրված նկարագրության հետ: Տարբերություններ կա՞ն, թե՞ ոչ:

Հարստացնենք մեր բառապաշարը

Վանք, գմբեթ, սրահ, բեմ, խորան, պատարագի սեղան, մկրտության ավազան, ավանդատուն:

Բառարան

Վանք – կուսակրոն հոգևորականների, վանականների համար նախատեսված եկեղեցի-բնակավայր, որի մեջ մտնում են նաև կացարաններ, կրթական, տնտեսական և այլ շինություններ:

26 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Լրացուցիչ նյութ

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգվույս՝
Ինչպես քարայր մ’ընդարձակ, պարզ ու խորունկ, մութ ու լույս...
Իր գավիթով հյուրընկալ, իր լայն բեմով ու հեռուն
Կանգնած իր լուռ խորանով, որ կարծես նա՛վ մ’է ծըփուն...

Եկեղեցին Հայկական ես աչքըս գոց կը տեսնեմ
Ու կը շնչեմ, կը լըսեմ՝ իր Հիսուսով մանկադեմ,
Իր սեղանեն մըխացող քուլա-քուլա խունկերով
Եվ իր պատերը ցնցող աղոթքներով ալեխռով...

Եկեղեցին Հայկական բարձրը բե՛ռդն է հավատքին
Իմ պապերուս, որ հողեն զայն քար առ քար հանեցին
Եվ երկինքեն իջուցին զայն ցող առ ցող, ամպ առ ամպ
Ու թաղվեցա՛ն անոր մեջ հանդարտությամբ, հեզությամբ...

Եկեղեցին Հայկական մեծ վարագույր մ՛է բանված՝
Որուն ետև, սըկիհին մեջ կիջնե Ի՛նքը Աստուած,
Որուն առջև գլխահակ կու հայի իմ ազգըս ամբողջ
Հաղորդվիլ անցյալին հաց ու գինվով կենսառողջ...

Եկեղեցին Հայկական՝ ծովուն դիմաց ալեկոծ
Նավահանգիստ մ’է խաղաղ. ցուրտ գիշերին՝ հո՛ւր և բոց,
Ու տոթակեզ ցերեկին անտա՛ռ մըն է ստվերոտ,
Ուր շուշաններ կը ծաղկին Շարականի գետին մոտ...

Եկեղեցին Հայկական մեն մի քարին տակ գետնի,
Դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամփա մը ունի...
Եկեղեցին Հայկական Հայ Հոգիին և Մարմնույն
Ջըրահանդե՛րձն է փայլուն, մինչ իր խաչերն են դաշույն,
Եվ զանգակներն են բոմբյո՛ւն, ու երգն է միշտ Հաղթություն...

Վահան Թեքեյան

27 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Հարցեր և առաջադրանքներ լրացուցիչ նյութի վերաբերյալ

1. Բանաստեղծությունից դո՛ւրս գրեք եկեղեցական շինության կառուցվածքին վերաբերող ձեզ ծանոթ բառերը:
2. Ի՞նչ համեմատություններ է օգտագործել հեղինակը հայկական եկեղեցին նկարագրելիս:
3. Ըստ հեղինակի՝ ի՞նչ է հայկական եկեղեցին հայ մարդու համար:

Բառարան

Գոց – փակ, կողպված:
Սկիհ – պատարագի արարողության ժամանակ օգտագործվող արծաթե կամ ոսկե բաժակ:
Զրահանդերձ – զրահազգեստ:
Հայել – նայել:
Բոմբյուն – թնդյուն, դղրդյուն:
Բանված – ասեղնագործած:
Ալեխառով – ալեկոծված, փոթորկված:

Ս. Գայանե եկեղեցին Վաղարշապատում

28 von 90 16.02.2021, 11:04



ԳԼՈՒԽ 3
ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

6. Հայոց եկեղեցու խորհուրդները

Հայոց եկեղեցին ունի **յոթ խորհուրդներ:**
Դրանք են.

Ս. Մկրտություն
Ս. Դրոշմ
Ապաշխարություն
Ս. Հաղորդություն
Պսակ կամ Ամուսնություն
Ձեռնադրություն

Խորհրդավոր ընթրիք

Կարգ հիվանդաց:

Մկրտությունը, դրոշմը, ապաշխարությունը և հաղորդությունը քրիստոնյայի համար **պարտադիր** խորհուրդներ են, իսկ ամուսնությունը և ձեռնադրությունը **կամավոր** են: Կարգ հիվանդացը կատարվում է միայն հիվանդների համար:

Առաջին հինգ խորհուրդներին առանձին-առանձին կծանոթանանք հաջորդ դասերին: Այստեղ համառոտ անդրադառնանք ձեռնադրությանը և հիվանդաց կարգին:

Ձեռնադրություն

Ձեռնադրության խորհրդի միջոցով ձեռնադրվողը դառնում է հոգևորական և ստանում հոգևոր աստիճան:

Նախորդ դասերից մենք արդեն ծանոթ ենք Հայոց եկեղեցու նվիրապետական կարգին: Այդ կարգի համաձայն՝ **քահանայի ձեռնադրությունը կատարում է եպիսկոպոսը**, իսկ եպիսկոպոսինը՝ **կաթողիկոսը**:

Կաթողիկոսի ձեռնադրության և օծման արարողությունը, որ մեր եկեղեցու ամենագեղեցիկ արարողություններից է, կատարվում է տասներկու **եպիսկոպոսների կողմից**:

Ձեռնադրության խորհուրդը միշտ կատարվում է պատարագի ընթացքում: Կուսակրոն և ամուսացյալ բոլոր հոգևորականները պատարագի ընթացքում ստանում են քահանայական օծում, որով նրանց իրավունք է տրվում կատարել եկեղեցական խորհուրդներ:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Կարգ հիվանդաց

Հիվանդաց կարգն այն խորհուրդն է, որով հոգևորականը հատուկ աղոթք է կարդում հիվանդի համար, որպեսզի Աստծու օգնությամբ նա ապաքինվի և ստանա մեղքերի թողություն: Խորհուրդը կատարվում է ոչ միայն եկեղեցում, այլև տանը՝ ծանր, անկողնային հիվանդների համար: Նրանց համար դա նաև գործած մեղքերի համար ներում ստանալու հնարավորություն է:

Ձեռնադրություն

Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկե՛ք Հայ Առաքելական Եկեղեցու յոթ խորհուրդները: Որո՞նք են դրանցից պարտադիր քրիստոնյայի համար:
2. Ո՞ր խորհուրդն են անվանում ձեռնադրություն:
3. Ո՞վ է կատարում քահանայի, եպիսկոպոսի, կաթողիկոսի ձեռնադրությունը:
4. Եկեղեցական ո՞ր արարողության ընթացքում է կատարվում ձեռնադրությունը:
5. Ո՞ր խորհուրդն են անվանում կարգ հիվանդաց:

Հարստացնենք մեր բառապաշարը

Խորհուրդ, ձեռնադրություն, կարգ հիվանդաց, մեղքերի թողություն:

30 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

7. Ս.Մկրտություն և Ս.Դրոշմ

Քահանան հարցնում է կնքահորը.
- Այս երեխան ի՞նչ է ցանկանում:
Կնքահայրը պատասխանում է.
-Հավատք, հույս, սեր և մկրտություն:

Մկրտության խորհրդի իմաստը

Կյանքում շատերս ենք կարևորում մեր ծննդյան օրը և հաճախ այն տոնում ենք մեծ շուքով: Մեր աշխարհ գալը, մեր ծննդյան օրը գեղեցիկ և մեծ իրադարձություն է: Այդպիսի գեղեցիկ և կարևոր իրադարձություն է նաև մեր **մկրտությունը:** Մկրտության խորհրդի միջոցով դառնում ենք քրիստոնյա, Հիսուս Քրիստոսի հետևորդ:

Մկրտությունը կատարվում է մյուռոնով և խաչով օրհնված ջրով՝ **սրբելու, մաքրելու** համար մկրտվողին մեղքից, որը կոչվում է սկզբնական կամ ադամական մեղք: Նախորդ տարվա դասընթացից մենք արդեն գիտենք, որ Ադամը չլսեց Աստծու պատվիրանը, մեղք գործեց, այդպիսով հեռացավ Աստծուց և զրկվեց դրախտային կյանքից:

Մկրտությամբ մենք մաքրվում ենք ադամական մեղքից, վերադառնում ենք Աստծուն և խնդրում ներել մեր բոլոր մեղքերը:

Ի՞նչ է անհրաժեշտ մկրտության համար: Նախ պետք է **հավատք** ունենալ: Մկրտվողը պետք է ծանոթ լինի քրիստոնեությանը, եկեղեցու վարդապետությանն ու ավանդույթներին:

Այդ դեպքում կարող է հարց առաջանալ՝ ինչո՞ւ է կատարվում մանուկների մկրտությունը, որոնք դեռևս ոչինչ չգիտեն: Այն պարզ պատճառով, որ քրիստոնյա ծնողները ցանկանում են, որպեսզի մկրտությամբ իրենց զավակները մաքրվեն ադամական մեղքից և դաստիարակվեն եկեղեցու ավանդույթներով:

Հիսուս Քրիստոսի մկրտությունը

31 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Նրանք վստահ են, որ իրենց երեխան կլինի բարի, առաքինի, Աստծուն և իր ազգային եկեղեցուն հավատարիմ, իր ազգին պիտանի անձ:

Մկրտվող երեխան պետք է ունենա իր **կնքահայրը**, ով պարտադիր պետք է ***մկրտված*** լինի: Ծնողների հետ միասին կնքահայրը պիտի զբաղվի իր սանիկի քրիստոնեական և ազգային դաստիարակությամբ:

Մկրտության ընթացքը

Մեռոնօրհնեքի արարողություն

Նախ պետք է իմանալ, որ մկրտության վայրը **եկեղեցին է**, իսկ մկրտության նյութը՝ մյուռոնով ու խաչով օրհնված ջուրը: Մկրտվելիս պետք է ունենալ **խաչ**, **նարոտ*** և **սրբիչ**: Ընդունված է մկրտությունից հետո այդ սրբիչը նույնությամբ պահել:

Մկրտությունը կատարում է քահանան: Մկրտության ավազանի մոտ նա երեք անգամ հարցնում է կնքահորը, թե երեխան ինչ է ցանկանում: Կնքահայրը պատասխանում է՝ **հավատք, հույս, սեր և մկրտություն:** Այնուհետև երեխան մկրտվում է օրհնված ջրով, որից հետո կատարվում է **դրոշմի խորհուրդը**:

Կարևոր է իմանալ, որ Հայոց եկեղեցու կողմից արգելվում է երկու անգամ մկրտվելը, որովհետև ինչպես որ մարդը մեկ անգամ է ծնվում, մեկ անգամ էլ մկրտվում է:

Մկրտված անձը դառնում է քրիստոնյա և Հայոց եկեղեցու զավակ:

Դրոշմի խորհուրդը

Մկրտությունից անմիջապես հետո քահանան մեռոնով օծում, ***դրոշմում է*** մկրտվածի զգայարաններն ու մարմնի մասերը՝ *ճակատը, աչքերը, ականջները, քիթը, շրթունքները, ձեռքերը, կուրծքը, թիկունքը և ոտքերը:* Եվ ամեն անգամ ասում է համապատասխան աղոթքի խոսքեր ու մեռոնով դրոշմում, կնքում է Հիսուս Քրիստոսի անունով: Մկրտությունն ու դրոշմը ժողովրդական լեզվի մեջ միասին կոչվում են նաև **կնունք**:

Դրոշմի խորհուրդը կատարվում է մեռոնով (մյուռոնով):

32 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ի՞նչ է նշանակում մկրտություն: Ո՞րն է մկրտության խորհրդի իմաստը:
2. Ինչո՞ւ է կատարվում մանուկների մկրտություն:
3. Ի՞նչ պարտականություններ ունի կնքահայրը:
4. Որտե՞ղ և ինչպե՞ս է կատարվում մկրտության արարողությունը:
5. Կարելի՞ է արդյոք երկու անգամ մկրտվել:
6. Քահանան ինչպե՞ս է կատարում դրոշմի խորհուրդը:

բ) Առաջադրանքներ

Գրե՛ք փոքրիկ շարադրություն «Իմ մկրտության օրը» վերնագրով:

Հարստացնենք մեր բառապաշարը

Մկրտություն, դրոշմ, կնունք, մեռոն, նարոտ, կնքահայր (քավոր), եկեղեցու վարդապետություն:

Բառարան

Նարոտ – կարմիր և սպիտակ գույնի թելերի հյուսվածք:

Եկեղեցու վարդապետություն – Աստվածաշնչի և եկեղեցու ուսմունքի վրա հիմնված եկեղեցական ուսուցման և բացատրության ամբողջություն:

Մեռոնի կաթսա

33 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Լրացուցիչ նյութ

Իմ կընունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբազան,
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.
Սարը եղավ կնքահայրս, ցողը՝ մյուռոն կենսավետ,
Ու կնքողս Նա Ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

(Հովհ. Թումանյան)

Առաջադրանք լրացուցիչ նյութի վերաբերյալ

Քառյակից դո՛ւրս գրեք մկրտությանը և դրոշմին վերաբերող բառերը:

Մկրտություն

34 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

8. Ապաշխարություն

- Չի՛ կարելի, ամո՛թ է, - հաճախ ենք լսում մեր ծնողներից փոքր տարիքում մեր արած չարությունների ու վատ արարքների համար:

- Ների՛ր, հայրիկ, էլ չեմ անի, մեղավոր եմ, - պատասխանում ենք մենք՝ ափսոսալով ու ներողություն խնդրելով մեր արածի համար:

Այսպիսի մի երկխոսության կարելի է նմանեցնել **ապաշխարության խորհուրդը:** Ապաշխարելիս մարդը հասուն տարիքում ասես կրկնում է մանկության տարիների իր խոսքերը: Այս անգամ, սակայն, դա կատարվում է եկեղեցում, քահանայի ներկայությամբ՝ ավելի խոր գիտակցելով իր գործած սխալն ու անթույլատրելի արարքը, որ ***մեղք*** է կոչվում: Հասուն մարդն էլ մանկան պես ընդունում է իր մեղքը, ափսոսանք է հայտնում դրա համար կամ, ինչպես ասում են, ***զղջում*** է և ապա ***թողություն*** ստանում:

Պետրոս առաքյալի ապաշխարությունը

Ապաշխարության խորհրդի իմաստը

Ապաշխարության խորհրդով թողություն է տրվում այն մեղքերին, որոնք մարդը գործել է մկրտությունից հետո: Մկրտությունն ու դրոշմը ամեն մեկիս համար մի անգամ է լինում, իսկ **ապաշխարությունը կարող է կրկնվել**: Այսինքն, եթե մարդը նորից մեղք է գործում, ապա նրան հնարավորություն է տրված մաքրվել մեղքից և վերադառնալ ճիշտ ճանապարհի:

35 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Ապաշխարության կարգը

Ինչպիսի՞ն է ապաշխարության խորհրդի կատարման կարգը:

Նախ մարդը պետք է գիտակցի և անկեղծորեն **զղջա** իր կատարած վատ արարքի համար ու վճռականորեն որոշի այլևս չկրկնել այն:

Ապա իր գործած մեղքերը **խոստովանում է** եկեղեցում, հոգևորականի առջև՝ թողություն (ներում) ստանալու ակնկալիքով (սպասումով):

Այնուհետև հոգևորականը խոստովանողի համար սահմանում է ապաշխարություն՝ աղոթք, պահք, ողորմություն, բարեգործություն և այլ բարի գործեր: Այս կերպ ապաշխարողը հնարավորություն է ստանում **քավել** իր մեղքը:

Եվ վերջապես՝ **զղջումից**, **խոստովանությունից** և **քավությունից** հետո եկեղեցում Հաղորդության խորհրդի միջոցով մարդը **թողության** է արժանանում, այսինքն՝ ներվում են նրա մեղքերը:

Ապաշխարություն

Հարցեր և առաջադրանքներ

Հիշենք

1. Ի՞նչ եք հասկանում մեղք ասելով:
2. Ո՞րն է ապաշխարության խորհրդի իմաստը:
3. Ապաշխարելու հնարավորություն մարդուն մի անգա՞մ է տրված, թե՞ ոչ: Ինչո՞ւ:
4. Ո՞րն է ապաշխարության առաջին քայլը:
5. Ինչո՞ւ է մարդը խոստովանում իր գործած մեղքը:
6. Ինչպե՞ս կարող է մարդը քավել իր մեղքը:
7. Ինչպե՞ս է մարդը թողություն ստանում:

Հարստացնենք մեր բառապաշարը

Ապաշխարություն, մեղք, զղջում, խոստովանություն, քավություն, թողություն:

36 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

9. Ս. Հաղորդություն

Հացն ու գինին, Տեր կենդանին,
Մարութա բարձր Աստվածածին:

(հատված «Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոսից)

- *Այս է իմ մարմինը:*

Հաղորդության խորհրդի իմաստը

Մեզանից շատերը, անկասկած, մասնակցել են պատարագի արարողությանը: Պատարագի ժամանակ ներկաները քահանայի ձեռքից գինու մեջ թաթախված հաց (նշխար*) են ընդունում: **Հացն ու գինին** այստեղ սովորական հաց ու գինի չեն, այլ **խորհրդավոր* իմաստ ունեն:** Հացն այս դեպքում ներկայացնում է մարդկանց մեղքերի թողության համար խաչված **Քրիստոսի մարմինը**, իսկ **գինին՝ Նրա արյունը**:

Այսպիսով՝ քահանայի ձեռքից ընդունելով հացն ու գինին՝ մենք մասնակից ենք դառնում մի շատ կարևոր խորհրդի, որը կոչվում է ***Հաղորդություն:*** Ս. Հաղորդության միջոցով մենք դառնում ենք Վերջին ընթրիքի մասնակիցներ, հաղորդվում Աստծու հետ:

Խորհրդի հաստատումը

Հիշենք Վերջին ընթրիքի պատմությունը Նոր Կտակարանից: Հիսուս վերցնում է **բաղարջ*** հացը, օրհնում, տալիս տասներկու առաքյալներին և ասում. «Կերե՛ք, այս է Իմ մարմինը»: Հետո վերցնում է **անապակ*** գինով լի բաժակը, տալիս աշակերտներին և ասում. «Խմեցե՛ք դրանից ամենքդ, այս է Իմ արյունը»: Այնուհետև պատվիրում է. **«Այս արե՛ք Իմ հիշատակի համար»**:

Այսպիսով՝ Վերջին ընթրիքի ժամանակ Հիսուս Քրիստոս հաստատում է Ս. Հաղորդության խորհուրդը:

Հաղորդության շնորհիվ ներվում են մեր մեղքերը, և հնարավորություն է տրվում վերադառնալու ճիշտ ճանապարհի:

Հաղորդությունը կապված է ապաշխարության խորհրդի հետ, որին դուք արդեն ծանոթացել եք նախորդ դասին:

37 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Հաղորդության խորհրդի կարգը

Հաղորդությունը տրվում է հոգևորականի կողմից գինու մեջ թաթախված նշխարով: Այն պատարագի արարողության առանցքն է:

Հաղորդություն ստանալու համար անպայման պետք է ***մկրտված*** լինել: Հաղորդվելուց առաջ անհրաժեշտ է զղջալ ու խոստովանել մեղքերը:

Խորհրդավոր ընթրիք

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ է հաստատել Հաղորդության խորհուրդը:
2. Ինչո՞վ է կատարվում Հաղորդությունը:
3. Եկեղեցական ո՞ր արարողության մեջ գլխավոր դեր ունի Հաղորդությունը:
4. Ո՞ւմ կողմից է տրվում Հաղորդությունը:
5. Ովքե՞ր կարող են Հաղորդություն ստանալ:

Հարստացնենք մեր բառապաշարը

Խորհրդավոր, բաղարջ, անապակ, Հաղորդություն:

Բառարան

Անապակ – մաքուր, անարատ:

Խորհրդավոր – այստեղ՝ անիմանալի, անբացատրելի, խորհուրդ պարունակող:

Բաղարջ – առանց թթխմորի պատրաստված հաց:

Նշխար – հաղորդության համար օգտագործվող հաց՝ կլոր, վրան խաչի պատկերով:

38 von 90 16.02.2021, 11:04

Լրացուցիչ նյութ

Օխտը գոմշի կաշի հագավ,
Որ չըպատռի իրեն զոռից,
Կանգնեց Օհան, ամպի նման
Գոռաց Սասմա սարի ծերից:

-Հե՜յ - հե՜յ Դավի՜թ, որտե՜ղ ես դու.
Հիշի՜ր խաչը քո աջ թևի,
Սուրբ Տիրամոր անունը տո՜ւր,
Ու դուրս արի լույսն արևի...

Ձենը գնաց դըմբդըմբալով՝
Դավթի ականջն ընկավ հորում.
-Հա՜յ, հա՜յ, - ասավ, - հորեղբայրս է,
Սասմա սարից ինձ է գոռում:

Ո՜վ Մարութա Աստվածածին,
Ո՜վ անմահ Խաչ պատարագի,
Ձեզ եմ կանչել, - հասե՜ք Դավթին...
Կանչեց, տեղից ելավ ոտքի,

Էնպես զարկեց ջաղաց քարին՝
Քարը եղավ հազար կտոր,
Կտորները երկինք թռան,
Ու գնում են մինչև էսօր:

(հատված Հովհ. Թումանյան, «Սասունցի Դավիթ» պոեմից)

Սասունցի Դավիթ

Հարցեր լրացուցիչ նյութի վերաբերյալ

1. Ո՞ւմ օգնությանն է դիմում Ձենով Օհանը Դավթին ոգևորելու համար:
2. Ո՞ւմ անունն է տալիս Սասունցի Դավիթը հորի մեջ գտնվելիս:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

10. Պսակ

- Տե՞ր ես, որդյա՛կս, - հարցնում է քահանան նորափեսային:
- Տե՛ր եմ, - պատասխանում է նա:
- Հնազա՞նդ ես, զավա՛կս, - հարցնում է քահանան նորահարսին:
- Հնազա՛նդ եմ, - պատասխանում է նորահարսը:

Կանայի հարսանիքը

Քահանայի ու նորապսակների այս երկխոսությունը տեղի է ունենում եկեղեցում՝ պսակադրության ժամանակ: Պսակադրության խորհրդով նորափեսան ու նորահարսն ամուսնանում են և կազմում ընտանիք:

Պսակի խորհրդի իմաստը

Պսակադրության արարողության կատարումը եկեղեցում կարևոր իմաստ ունի: Դրանով նորապսակներն **աստվածային օրհնություն** են ստանում իրենց նորաստեղծ ընտանիքի համար: Պսակի խորհրդի միջոցով Հայոց եկեղեցին շեշտում է ընտանիքի ամրության ու կայունության կարևորությունը:

Պսակադրության արարողության ժամանակ՝ վերն ասված խոսքերից հետո, քահանան թույլատրում է նորապսակներին մատանիներ փոխանակել: **Փեսայի ու հարսի** մատներին դրվող **մատանիները նրանց միության անխախտ լինելու** նշաններն են: Նորապսակների գլխին դրվող **թագերը** խորհրդանշում են, որ նրանք համատեղ ամբողջ կյանքի ընթացքում պետք

40 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

է պահպանեն հավատարմությունը պսակադրության ուխտին: Միևնույն բաժակից **գինի խմելը** նշանակում է, որ կյանքի և՛ ուրախությունների, և՛ դժվարությունների ժամանակ նրանք պետք է անբաժան լինեն:

Պսակի խորհրդի կատարումը

Պսակի խորհուրդը կատարվում է քահանայի կողմից: Ժողովրդի ներկայությամբ քահանան ամուսնացող զույգին հարցնում է՝ իրենց կամքո՞վ են եկել պսակվելու: Դրական պատասխան ստանալուց հետո նա միացնում է նորապսակների աջ ձեռքերն ու ճակատները և օրհնում **նրանց միությունը**:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ո՞րն է պսակի խորհրդի իմաստը:
2. Ի՞նչ խորհրդանշաններ են օգտագործվում պսակադրության արարողության ընթացքում: Ի՞նչ են դրանք նշանակում:
3. Ե՞րբ է քահանան օրհնում նորապսակների միությունը:

բ) Առաջադրանք

Քննարկե՛ք և պատասխանե՛ք հարցին.
Ի՞նչ նշանակություն ունի պսակադրությունը եկեղեցում կատարելը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Պսակ, նորապսակ զույգ, պսակադրության ուխտ:

41 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Լրացուցիչ նյութ

ՏՈՒՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ

Տունը և ընտանիքը մի փոքրիկ թագավորության երկիրն ու սահմանն են, որի նահապետական աթոռին նստում են ծնողները: Հայրն իբրև թագավոր և մայրն իբրև թագուհի կառավարում են ընտանիքը: Սույն ընտանեկան պալատի ու թագավորության մեջ ո՛չ ոստիկան կա, ո՛չ սուր, ո՛չ բռնություն, ո՛չ գավազան, այլ այդ բոլորի տեղ հայրական սերն ու մայրական գորովն է: Դաստիարակությունն ու խրատը ծնողների կենդանի օրինակն է...

Ժողովուրդը եթե առաջադիմում է, ապա իր առաջին քայլերն առնում է ընտանեկան սրահից, եթե լուսավորվում է, իր լույսն ընտանեկան ճրագից է, եթե հզորանում է, իր ոգին ու կապն ընտանիքն է, եթե հզորանում է, իր ուժն ու բազուկն ընտանիքից է, եթե հարստանում է, իր գանձարանն ու գանձապետն ընտանիքն է...

Խրիմյան Հայրիկ

(*փոխադրված է արևմտահայերենից*)

Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն II-ի ընտանիքը

42 von 90 16.02.2021, 11:04

ԳԼՈՒԽ 4
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ

11. Ընդհանուր ակնարկ եկեղեցական տոների մասին

Պատարագ

Ինչ է տոնը

Տոնը անհատի կամ ժողովրդի կյանքում տեղի ունեցած կարևոր մի իրադարձության հանդիսավոր նշումն է: Մարդիկ, սովորաբար, ամեն տարի բարեկամների և հարազատների հետ տոնում են իրենց ծննդյան օրը:

Կան նաև պետական տոներ, ինչպես, օրինակ, Անկախության տոնը, Սահմանադրության տոնը և այլն:

Եկեղեցին նույնպես ունի իր տոները՝ **Սուրբ Ծնունդ**, **Սուրբ Հարություն** և այլն:

Պետական և եկեղեցական տոները կատարվում են շքեղ հանդիսություններով, արարողություններով և տարբեր միջոցառումներով:

Սակայն տոների նպատակը միայն հանդիսություններ կազմակերպելը չէ: Տոներն ունեն և՛ ուսուցողական, և՛ դաստիարակչական նշանակություն: Յուրաքանչյուր տոն ունի իր խորհուրդը, իմաստն ու նշանակությունը, պատգամը, ավանդությունը:

Հայոց եկեղեցին տարվա օրերը բաժանել է 3 հիմնական խմբերի՝ **տերունական, սրբերի հիշատակությունների** և **պահքի օրեր**:

Տոները լինում են անշարժ և շարժական: Անշարժ տոները միշտ նշվում են տարվա նույն օրը՝ անկախ նրանից, թե այդ օրը շաբաթվա ո՛ր օրն է: Շարժական տոներն ամեն տարի նշվում են տարբեր օրերի:

Տերունական տոներ

Տերունական նշանակում է Տիրոջը, այսինքն՝ Հիսուսին նվիրված: Մարիամ Աստվածածնին, խաչին ու եկեղեցուն նվիրված տոները ևս տերունական են անվանվում: Տերունական տոներ են նաև բոլոր կիրակիները:

Տերունական տոներից հինգը կոչվում են **տաղավար*** տոներ: Դրանք են՝ **Սուրբ Ծնունդ, Սուրբ Հարություն (Ս. Զատիկ), Պայծառակերպություն,**

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Սուրբ Աստվածածնի վերափոխում և **Խաչվերաց**:

Սրբերին նվիրված տոներ: Պահքի օրեր

Տոների մյուս խումբը նվիրված է սրբերին, այսինքն՝ այն անձանց, ովքեր սուրբ են հռչակվել եկեղեցու կողմից: **Եկեղեցին սուրբ է անվանում առաքինի, ազնիվ, քրիստոնեական հավատին իրենց ողջ կյանքը նվիրած, եկեղեցուն և ժողովրդին մեծ ծառայություններ մատուցած անձանց**: Այդպիսի տոներից են, օրինակ, Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Սուրբ Վարդանանց, Սուրբ Թարգմանչաց, Սուրբ Սարգսի տոները և այլն:

Հայոց եկեղեցին ունի նաև բազմաթիվ պահքի օրեր: Պահք կամ պաս նշանակում է որոշ տեսակի կերակուրներից հրաժարում: Պահքի ընթացքում մարդիկ հրաժարվում են կենդանական ծագում ունեցող կերակուրներից, վատ ու վնասակար սովորույթներից: Նրանք սնվում են միայն բուսական կերակուրներով, նվիրվում աստվածաշնչյան կամ սուրբ գրական ընթերցումների, աղոթքների: Հայոց եկեղեցում կան երեք տեսակի պահոց օրեր՝ օրապահք, շաբաթապահք և Մեծ պահք:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է նշանակում տոն:
2. Քանի՞ խմբի են բաժանվում Հայոց եկեղեցու տոները: Թվարկե՛ք դրանք:
3. Ինչո՞վ են տարբերվում շարժական և անշարժ տոները:
4. Ո՞ր տոներն են կոչվում տերունական:
5. Որո՞նք են կոչվում տաղավար տոներ: Թվարկե՛ք դրանք:
6. Տերունական տոներից բացի, է՞լ ինչ տոներ կան եկեղեցական տոնացույցում: Կարդացե՛ք լրացուցիչ նյութը և փորձե՛ք բացատրել «տոնացույց» բառը:
7. Ի՞նչ է նշանակում պահք:

Հարստացնենք մեր բառապաշարը

Տոն, տերունական, տաղավար և սրբերին նվիրված տոներ, պահք:

44 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Բառարան

Տաղավար - հին ժամանակներում կարևոր տոները մարդիկ նշում էին բնակավայրերից դուրս՝ հյուղակներում կամ խրճիթներում, որոնց տաղավար էին անվանում. այդտեղից էլ՝ «տաղավար տոներ» արտահայտությունը:

Լրացուցիչ նյութ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԱՑՈՒՅՑԸ

Տոները ճիշտ ժամանակին կատարելու համար մարդիկ դեռ հին ժամանակներից կազմել են զանազան օրացույցներ և տոնացույցներ: Տոնացույցը եկեղեցում գործածվող գրքերից է, որում նշվում են տարվա ընթացքում եկեղեցական տոների օրերը և արարողակարգերը:



45 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

12. Ավետման և Ծննդյան տոները

Ավետման տոնը

Ավետում

Մարիամ Աստվածածնի մոտ է գալիս Աստծու կողմից ուղարկված Գաբրիել հրեշտակը և ավետում է, որ նրանից ծնվելու է **Աստծու Որդին**՝ մարդկության Փրկիչը:

Այս լուրին է նվիրված **Ավետման տոնը**: Այդպես է կոչվում, որովհետև ավետել նշանակում է ուրախ լուր հայտնել: Ավանդությունը պատմում է, որ այս լուրը Մարիամին հայտնելու ժամանակ Գաբրիել հրեշտակի ձեռքին եղել է դրախտից բերված բրաբիոն ծաղիկը:

Ավետումը Հայոց եկեղեցու **անշարժ տոներից է.** այն միշտ տոնվում է **ապրիլի 7-ին**: Այս տոնը մեր հանրապետությունում նշվում է նաև պետականորեն՝ որպես Մայրության և գեղեցկության տոն: Այդ օրը տղամարդիկ իրենց մայրերին, քույրերին, կանանց և աղջիկներին ծաղիկներ են նվիրում:

Սուրբ Ծնունդ

Մարդու կյանքում ամենաուրախ օրերից մեկն իր ծննդյան օրն է: Նույն ձևով եկեղեցու ամենաուրախ տոնը Հիսուս Քրիստոսի ծննդյան օրն է: Այդ օրը եկեղեցիներում տեղի են ունենում բազմամարդ, հանդիսավոր արարողություններ:

Մինչև V դարը քրիստոնեական բոլոր եկեղեցիները Հիսուսի Ծննդյան և Մկրտության տոնը նշում էին հունվարի 6-ին: Հետագայում որոշ եկեղեցիներ Սուրբ Ծնունդը սկսեցին նշել դեկտեմբերի 25-ին, որպեսզի մարդիկ մոռանան այդ օրերին նշվող հեթանոսական տոնը:

Հայոց եկեղեցին հավատարիմ է մնացել հին կարգին և Հիսուսի Ծննդյան տոնը ամեն տարի նշում է հունվա-

Հիսուս Քրիստոսի ծնունդը

46 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

րի 6-ին: Հետևաբար այն պատկանում է անշարժ տոների թվին:

Այդ օրը Հայոց եկեղեցին նշում է նաև **Հիսուսի Մկրտության** տոնը:

Ինչպես է նշվում Սուրբ Ծննդյան տոնը

Սուրբ Ծննդյան տոնի նախորդ օրը երեկոյան մատուցվում է պատարագ, որը կոչվում է **Ճրագալույցի** պատարագ: Ճրագալույց նշանակում է ճրագները վառել: Հունվարի 5-ի երեկոյան տեսնում ենք մարդկանց, ովքեր վառվող մոմը կամ ճրագը ձեռքներին դուրս են գալիս եկեղեցուց և գնում իրենց տները:

Այդ օրը բազմաթիվ քրիստոնյաներ եկեղեցու կանթեղներից մոմ կամ ճրագ են վառում և տանում իրենց տները՝ լուսավորելու ու պատրաստվելու Քրիստոսի Ծննդյան տոնին:

Հաջորդ օրն առավոտյան եկեղեցիներում տեղի է ունենում Ծննդյան Ս. Պատարագ: Պատարագի ընթացքում հնչում է ավետիս՝ *«Քրիստոս ծնվեց և հայտնվեց»*, որի պատասխանն է՝ *«Ձեզ և մեզ մեծ ավետիս»*:

Այնուհետև կատարվում է Քրիստոսի մկրտության տոնը՝ ջրօրհնեքի արարողությամբ:

Ջրօրհնեքի արարողության ժամանակ ջրի մեջ իջեցվում է Ս. Խաչը, որը խորհրդանշում է Հորդանան գետում Հիսուս Քրիստոսի մկրտությունը: Այնուհետև ջրի մեջ հեղվում է Ս. Մյուռոնը, որն իր հերթին խորհրդանշում է աղավնու տեսքով Ս. Հոգու իջնելը Հիսուս Քրիստոսի վրա մկրտությունից հետո: Ջրօրհնեքի արարողությունից հետո մյուռոնով օրհնված ջուրը բաժանվում է հավատացյալ ժողովրդին:

Ջրօրհնեք

47 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ինչո՞ւ է տոնը Ավետում կոչվում: Ե՞րբ է այն նշվում:
2. Ապրիլի 7-ին ուրիշ ի՞նչ տոն է նշվում:
3. Հայոց եկեղեցին ե՞րբ է նշում Սուրբ Ծնունդը: Ե՞րբ է նշում Սուրբ Ծնունդը կաթոլիկ եկեղեցին: Ինչո՞վ է դա բացատրվում:
4. Ինչպե՞ս է կոչվում Սուրբ Ծննդյան նախորդ օրվա պատարագը:
5. Ինչպե՞ս են ավետում Քրիստոսի ծնունդը և ի՞նչ են պատասխանում:

բ) Առաջադրանք

Փորձե՛ք պարզել՝ ձեր թեմի տարածքում կա՞ արդյոք Աստվածածին անունով եկեղեցի: Նկարագրե՛ք այն:

Հարստացնենք մեր բառապաշարը

Ավետում, Սուրբ Ծնունդ, Ճրագալույց, Ջրօրհնեք, Աստվածհայտնություն:

Լրացուցիչ նյութ

ՋՐՕՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Հունվարի 6-ին՝ Ս. Ծննդյան տոնին մատուցվող պատարագից հետո, կատարվում է ջուր օրհնելու արարողությունը: Նոր Կտակարանում պատմվում է, որ Հովհաննես Մկրտիչը Հորդանան գետում քարոզում էր ու մկրտում ժողովրդին, որի համար էլ նրան անվանում են Մկրտիչ, այսինքն՝ մկրտող:

30 տարին լրանալիս Հովհաննես Մկրտչի մոտ մկրտվելու է գալիս նաև Հիսուս: Հիսուսի մկրտության ժամանակ երկնքից Սուրբ Հոգին աղավնու նման իջնում է Հիսուսի վրա, և հնչում է աստվածային ձայնը՝ *«Դա՛ է իմ սիրելի Որդին»*:

Այսինքն՝ Հորդանան գետում մկրտության ժամանակ երկնքից հնչած ձայնով ժողովրդին հայտնվեց, որ Հիսուս Աստծու Որդին է:

Այս պատճառով տոնը կոչվում է Աստվածհայտնություն:

48 von 90 16.02.2021, 11:04

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ

Հայոց եկեղեցում տնօրհնեքի կարգ սահմանված է կատարել Ս. Ծննդյան և Ս. Հարության տոներից հետո:

Տնօրհնեքի ժամանակ քահանան օրհնում է տան ջուրը, հացը և աղը:

Քահանան օրհնված ջուրը խաչաձև ցողում է տան պատերին և խնկարկում տունը: Այնուհետև օրհնում է տան անդամներին՝ Աստծուց նրանց համար պահպանություն հայցելով:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

13. Սուրբ Սարգիս

*Սիրելի՛ աշակերտներ, դուք շատ եք լսել **Սուրբ Սարգսի** և **աղի բլիթի** մասին:*

Ով է Սուրբ Սարգիսը

Սուրբ Սարգիս

Ավանդությունը պատմում է, որ **Սարգիսը** հռոմեացի զորավար էր և ապրել է IV դարում: Դառնալով քրիստոնյա՝ նա սկսում է քարոզել քրիստոնեությունը: Սակայն գահ բարձրացած Հուլիանոս Ուրացող կայսրը սկսում է հալածել քրիստոնյաներին:

Սարգիսը ստիպված տեղափոխվում է Հայաստան: Հայոց թագավորը նրան խորհուրդ է տալիս գնալ Պարսկաստան:

Պարսից Շապուհ արքան սկզբում լավ է վերաբերում Սարգսին: Վերջինս օգնում է նրան Պարսկաստանի թշնամիների դեմ կռիվների ժամանակ:

Սակայն երբ Շապուհը իմանում է, որ նա քրիստոնյա է, պահանջում է ուրանալ քրիստոնեությունը և պաշտել կրակը: Սարգիսը հրաժարվում է: Զայրացած Շապուհը հրամայում է սպանել նրան:

Հետագայում **Մեսրոպ Մաշտոցը Սարգիս զորավարի աճյունից** մի մասունք տեղափոխում է Հայաստան՝ **Կարբի** (Աշտարակի մոտ), և այստեղ կառուցում մեծ եկեղեցի:

Սուրբ Սարգսի տոնը Հայոց եկեղեցու **շարժական** տոներից է և նշվում է հունվարի վերջին կամ փետրվարի սկզբին:

50 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Տոնակատարությունները

Տոնի նախօրյակին՝ ուրբաթ երեկոյան, տների դռների մոտ կամ տանիքին սկուտեղով ալյուրից պատրաստված փոխինդ էին դնում:

Ժողովուրդը հավատում էր, որ այդ երեկո Սարգիս զորավարն իր ձիով անցնում է տների տանիքների վրայով: Ուրախություն և հաջողություն էր սպասվում այն տանը, որի տանիքին դրված փոխինդին կդրոշմվեր Սարգիս զորավարի ձիու պայտը:

Ուրբաթ երեկոյան չամուսնացած աղջիկները և պատանիները նույն այս փոխինդից աղի բլիթ էին պատրաստում և ուտում: Գիշերը երազում ով իրենց ջուր տար, նա էլ պետք է լիներ իր փեսացուն կամ հարսնացուն:

Հայոց եկեղեցին **Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի** բարձր տնօրինությամբ Ս. Սարգսի տոնը հռչակել է նաև **Երիտասարդների օրհնության օր**:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է տոնը կոչվում Սուրբ Սարգիս:
2. Ի՞նչ գիտեք Սուրբ Սարգսի մասին:
3. Ո՞վ տեղափոխեց Սուրբ Սարգսի մասունքը Հայաստան:
4. Ինչպե՞ս են նշում տոնը:



Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցին

51 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Լրացուցիչ նյութ

ԱՐԱԳԱՀԱՍ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ

Ժողովրդական մտածողության մեջ Սարգիսը չի զոհվել, այլ «լույս» է դարձել և արագահաս է, ինչպես լույսը: Բոլոր նեղյալներին, գերիներին, որբերին, ճամփորդներին, վշտահարներին արագահաս կամ հարեհաս անվանված սուրբն օգնում է Աստծու առաջ իր բարեխոսությամբ:

Սակայն առավելաբար Սարգիսը ժողովրդի մեջ դիտվում է որպես զինվորականների և երիտասարդների սիրո հովանավոր ու նրանց նպատակներն իրականացնող սուրբ:

52 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

14. Սուրբ Վարդանանց տոնը

Վարդանանք: Ավարայրի ճակատամարտը

Վարդան Մամիկոնյան

Ավարայրի դաշտում հայոց սպարապետ **Վարդան Մամիկոնյանից** մինչև նրա հետ միասին մարտնչած զինվորին ու զենք վերցրած շինականին ժողովուրդը հավաքաբար **Վարդանանք** է անվանում:

«Վարդանանք» ու *«Ավարայր»* բառերը դարձել են հերոսականության և հայրենիքի համար ճակատագրական պահերին ազգովին համախմբվելու խորհրդանիշ:

Ավարայրի ճակատամարտը տեղի է ունեցել 451 թվականի մայիսի 26-ին: Հայոց եկեղեցին, սակայն, ամեն տարի Վարդանանց տոնը կատարում է ոչ թե մայիսին, այլ Մեծ պահքից առաջ ընկած հինգշաբթի օրը:

Վարդանանց տոնը հոգևոր մի ներքին խորհրդով կապվում է սկսվող պահքի հետ: Վարդանանք աներկյուղ գնացին թշնամուն ընդառաջ և իրենց զոհեցին **հանուն հավատի և հայրենիքի**: Մեծ պահքը ևս անձնազոհություն է պահանջում: Դրա համար հարկավոր են հավատ, զորեղ ոգի և ուժեղ կամք: Ահա այս պատճառով Վարդանանց տոնը նշում են Մեծ պահքից առաջ, որպեսզի Վարդանանց ոգով զորացած, կարողանան պահքի զրկանքները կրելով հասնել մինչև Քրիստոսի Հարության տոնը՝ Ս. Զատիկը:

Վարդանանց տոնը շարժական է: Այն նշվում է հունվարի 29-ից մինչև մարտի 4-ն ընկած ժամանակահատվածում:

Ավարայրի ճակատամարտը

Ղևոնդյանք

Վարդանանց տոնին նախորդող երեքշաբթի օրը Հայոց եկեղեցին նշում է Ղևոնդյանց տոնը: Հավաքաբար Ղևոնդյանք են անվանվում Վարդանանց շարժմանը մասնակցած այն հոգևորականները, ովքեր Ավարայրից հետո հալածվեցին և նահատակվեցին պարսից արքա Հազկերտ II-ի հրամանով:

Ղևոնդյանք ներկայացնում էին եկեղեցական բոլոր աստիճանները՝ կաթողիկոսից

53 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

մինչև սարկավագ: Թեև նահատակ այս հոգևորականների թվում էին ժամանակի կաթողիկոս Հովսեփ Վայոցձորեցին և երկու եպիսկոպոս, սակայն ճակատամարտի մասնակից հոգևորականներին հավաքաբար անվանեցին Ղևոնդյանք՝ գյուղական քահանա Ղևոնդի անունով:

Ղևոնդ երեցին էր վիճակված Ավարայրի ճակատամարտից առաջ Վարդան Մամիկոնյանի հետ միասին ոգեշունչ խոսքով դիմել Հայոց բանակի զինվորներին: Ավարտելով իր խոսքը՝ նա պատարագ է մատուցում, այնուհետև մկրտում զինվորներին և Հաղորդություն տալիս զորքին:

Ղևոնդյանց և Վարդանանց տոների այս կապվածությունը խորհրդանշում է, որ մեր պատմության ընթացքում և հատկապես ճակատագրական պահերին հայ գյուղացին, հայ զինվորն ու հայ հոգևորականը միշտ միասին են եղել:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վարդան Մամիկոնյանին և նրա զինակիցներին հավաքաբար ի՞նչ են անվանում:
2. Ի՞նչը ստիպեց նրանց անհավասար պայքարի դուրս գալ պարսից զորքերի դեմ:
3. Ե՞րբ է նշվում Վարդանանց տոնը: Ինչո՞վ է դա բացատրվում:
4. Հավաքաբար ինչպե՞ս են կոչվում Վարդանանց շարժմանը մասնակցած հոգևորականները:
4. Ո՞վ էր Ղևոնդ երեցը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Երեց:

54 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Լրացուցիչ նյութ

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՋՈՐՔԻՆ

«Արդ, աղաչում եմ ձեզ, ո՛վ իմ քաջ նիզակակիցներ. մանավանդ որ ձեզանից շատերը քաջությամբ ինձնից ավելի լավ եք և հայրենական գահի պատվով՝ ավելի բարձր. բայց երբ ձեր հոժար կամքով ինձ կարգեցիք ձեզ առաջնորդ և զորագլուխ, թող իմ խոսքերը ախորժալուր և բաղձալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին: Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ո՛չ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք. որպեսզի եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»:

Մահ իմացյալ անմահություն է:

55 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

15. Բուն Բարեկենդան և Մեծ Պահք

Վերընթերցե՛ք ապաշխարության խորհրդին վերաբերող դասը:

Ի՞նչ է նշանակում Բարեկենդան



Ձեզանից շատերն են կարդացել Հովհաննես Թումանյանի «**Բարեկենդանը**» հեքիաթը և հիշում են, թե ինչպես տանտիրուհին յուղն ու բրինձը տալիս է տան մոտով անցնող մի պատահական ճամփորդի:

Այդ ի՞նչ յուղ ու բրինձ էր, և ինչո՞ւ էր տանտերն այն բերել՝ ասելով, թե Բարեկենդանի համար է: Տանտիրուհին չէր խաբվի և նման տխուր ու ծիծաղելի վիճակի մեջ չէր ընկնի, եթե իմանար Բարեկենդանի մասին:

Բարեկենդան բառը կազմված է «բարի» ու «կենդանություն» բառերից և գրաբարում նշանակել է ուրախություն:

Բարեկենդանին մարդիկ իրար հյուր են գնում կամ ամբողջ ընտանիքով հավաքվում տոնական սեղանների մոտ և ուրախանում: Այս տոնի գլխավոր ուտելիքը յուղով փլավն է: Այս փլավի համար էր Թումանյանի հերոսը յուղ ու բրինձ բերել:

Բուն Բարեկենդանը միշտ տոնվում է կիրակի օրը և ավարտվում նույն օրը երեկոյան: Հաջորդ երկուշաբթի առավոտից սկսվում է **Մեծ պահքը**:

Բոլոր մեծ տոներին նախորդող կիրակին կոչվում է Բարեկենդան, իսկ Մեծ պահքին նախորդող կիրակին, մյուսներից տարբերելու համար, կոչվում է **Բուն Բարեկենդան**:

Մեծ պահք, կամ ինչու են պաս պահում

Երբեմն մեր ընկերներից կամ հարազատներից, իսկ ավելի հաճախ տատիկներից ու պապիկներից ժամանակ առ ժամանակ լսում ենք հետևյալ խոսքերը. «Մի՛ս չեմ ուտում, պասի մեջ եմ», կամ «Յուղոտ ոչինչ չառաջարկես, պաս եմ պահում»: Ի՞նչն է պատճառը, որ նրանք կենդանական ծագում ունեցող կերակուրներից հրաժարվում են:

Եկեղեցին բացատրում է, որ Մեծ պահքն ունի **հոգևոր** և **մարմնական** (նյութական) իմաստ: Հոգևոր իմաստով՝ մարդիկ, պահք պահելով, ապաշխարում են, այսինքն՝ զղջում են իրենց գործած մեղքերի համար: Մարմնական իմաստով՝ նրանք մարմինը մաքրում են վնասակար և ավելորդ

56 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

նյութերից, հաճախ նաև հրաժարվում իրենց նախասիրած կերակուրներից ու խորտիկներից:

Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոս: Նա անապատում 40 օր պահքի մեջ է անցկացրել: **Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են պահում Մեծ պահքը:**

Մեծ պահքի 40 օրերից հետո սկսվում է Զատկին նախորդող շաբաթը՝ Ավագ շաբաթը, որի ընթացքում մարդիկ նույնպես պահք են պահում: Մեծ պահքն ավարտվում է Զատիկի՝ **Քրիստոսի Հարության** ուրախ տոնով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է նշանակում Բարեկենդան:
2. Ինչպե՞ս են տոնում Բարեկենդանը:
3. Ինչո՞ւ է քրիստոնյան պաս պահում:
4. Հիսուսն անապատում պահքի 40 օր է անցկացրել: Ի՞նչ կապ կա պահքի և ապաշխարության խորհրդի միջև:
5. Ո՞ր տոնին է հետևում Մեծ պահքը: Որքա՞ն է տևում այն:
6. Ի՞նչ կերակուրներից են հրաժարվում պահքի ժամանակ:
7. Ժողովրդին սիրելի ո՞ր տոնն է անմիջապես հաջորդում Մեծ պահքին:

Հարստացնենք մեր բառապաշարը

Բարեկենդան, Մեծ պահք, Ավագ շաբաթ:

57 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Լրացուցիչ նյութ

Հին ժամանակներում Հայոց աշխարհում Բարեկենդանը տոնվել է մեծ տոնախմբություններով ու խրախճանքներով: Այդ օրը կազմակերպվել են մրցումներ, խաղեր ու դիմակահանդեսներ, որոնց մասնակցում էին երեխաները, պատանիները, կանայք ու տղամարդիկ: Խաղերը տեղի էին ունենում տներում, բակերում, հրապարակներում:

Կերպարանափոխված կամ դիմակավորված խմբերով զվարճախաղերը և թատերական ներկայացումները Բարեկենդանի առավել սիրված հանդիսություններն էին: Դրանց մասնակցում էին բոլորը: Երեկոյան, երբ խնջույքներից հոգնած մեծահասակները հավաքվում էին տանը, դուռը թափով բացվում և աղմուկով, երգով, թմբուկով ներս էր խուժում դիմակավորված երեխաների խումբը: Տղաները հագած էին լինում աղջիկների հագուստ, փոքրերը մեծի: Արտաքինը պիտի հնարավորին չափ ծիծաղաշարժ լիներ: Երեխաները տեսարան էին ներկայացնում գյուղի կյանքից կամ բեմադրում որևէ սրամիտ սյուժե:

Մեծահասակների ներկայացումների սյուժեները, անշուշտ, ավելի բարդ էին: Բարեկենդանի օրերին նշվում էր Վարդան զորավարի տոնը, և այդ ժամանակ հաճախ էին ներկայացվում դրվագներ Ավարայրի ճակատամարտից:

Բարեկենդանի տոնին նվիրված շատ խաղեր ու դիմակահանդեսներ գոյություն ունեն նաև եվրոպական մի շարք երկրներում:

Բարեկենդան

58 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

16. Տյառնընդառաջ

Ինչու է կոչվում Տյառնընդառաջ

Սուրբ Ծննդյան տոներից հետո անհամբերությամբ սպասում ենք ուրախ հանդիսություններով հարուստ **փետրվարի 14-ին**: Նախորդ օրը երեկոյան սկսվում և հաջորդ օրն ավարտվում է **Տյառնընդառաջի տոնը**, որը ժողովրդի մեջ հայտնի է նաև **Տրնդեզ** անունով:

Տյառնընդառաջ նշանակում է **Տիրոջն** ընդառաջ: Տոնը նվիրված է քառասնօրյա Հիսուսին տաճար բերելուն:

Տյառնընդառաջ

Տոնի իմաստը

Հին ժամանակներում գոյություն ուներ մի կարգ, ըստ որի ծնողներն առաջնեկ տղա երեխային քառասուն օրականում տանում էին տաճար:

Հովսեփն ու Մարիամը քառասուն օրական մանուկ Հիսուսին նույնպես տարան տաճար: Այստեղ նրանց ընդառաջ եկավ Սիմեոն անունով մի ծերունի:

Սիմեոն ծերունին գրկում է մանուկ Հիսուսին

Սիմեոնն արդար ու ազնիվ մարդ էր: Նոր Կտակարանում գրված է, որ Աստված ընդառաջել էր Սիմեոնի խնդրանքին՝ ապրել այնքան, մինչև տեսնի մարդկության Փրկչի ծնունդը: Հիսուսին տեսնելով՝ Սիմեոնը հասկանում է, որ կատարվել է իր խնդրանքը: Սպիտակահեր ծերունին գրկում է մանուկ Հիսուսին և ասում, որ նա փրկություն ու լույս կլինի մարդկանց համար: Նույն այս մաղթանքով ու աղոթքով մանուկ Հիսուսին ընդառաջ է ելնում Աննա մարգարեուհին, որը նույնպես իր կյանքի մեծ մասն ապրել էր տաճարում՝ սպասելով Փրկչին:

59 von 90 16.02.2021, 11:04

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ

Տոնակատարությունը

Արարողությունները եկեղեցում սկսվում են փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությամբ, որից հետո եկեղեցում ներկա գտնվողները վառվող մոմերով վերադառնում են իրենց տները:

Տոնակատարությունները շարունակվում են տների բակերում, որտեղ եկեղեցուց բերված կրակով խարույկներ են վառում: Դրանք ասես ցրում են ձմռան ցուրտն ու մթությունը և ավետում գարնան գալուստը: Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ Տյառնընդառաջը հաստատվել է իբրև նորապսակների և նորակազմ ընտանիքների օրհնության օր:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ինչո՞ւ է տոնը կոչվում Տյառնընդառաջ:
2. Ե՞րբ է այն նշվում:
3. Ո՞վ ընդառաջ գնաց մանուկ Հիսուսին:

բ) Առաջադրանք

Նկարագրե՛ք, թե ինչպես է ձեզ մոտ նշվում Տյառնընդառաջի տոնը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Տյառնընդառաջ:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Լրացուցիչ նյութ

Տյառնընդառաջի ժամանակ խարույկ էին վառում: Փայտը կամ մեկ այլ վառելիք բերում էին նշանված ու նորապսակ երիտասարդները: Քահանայի օրհնությունից հետո վառում էին եկեղեցու բակի մեծ խարույկը: Կրակը վառելու պատվավոր իրավունքը պատկանում էր այդ տարի ամուսնացած նորափեսաներին: Ամբողջ ժողովուրդն այստեղ էր հավաքվում՝ իրենց հետ փայտեր բերելով: Կրակը թեժացնելով՝ նրանք միմյանց կոչ էին անում «ձմեռը վառել»:

Տարածված էր այն պատկերացումը, թե Տյառնընդառաջի հետ վերջանում է «ձմռան քառասունքը»:

Գեղարդավանք, XIII դար

61 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

17. Ծաղկազարդ

Տոնի իմաստը

Եթե Զատկին նախորդող կիրակի օրը գնաք եկեղեցի, ապա կտեսնեք, որ այն զարդարված է բարդու կամ ուռենու ճյուղերով:

Խաչվելուց և հարություն առնելուց առաջ Հիսուս Քրիստոսը վերջին անգամ գնաց Երուսաղեմ:

Քաղաք մտնող Հիսուսին ժողովուրդը դիմավորեց մեծ ուրախությամբ՝ **որպես իր Փրկչի**: Շատերը նրա առջև ծառերի ճյուղեր և նույնիսկ իրենց զգեստներն էին փռում:

Հիսուսի մուտքը Երուսաղեմ

Հին աշխարհում ընդունված էր թագավորների ճանապարհը զարդարել գորգերով, ծաղիկներով: Այս ձևով մարդիկ արտահայտում էին իրենց սերն ու հավատը Քրիստոսի նկատմամբ:

Ահա այս իրադարձությանն է նվիրված տոնը, որը կոչվում է **Ծաղկազարդ:** Ծաղկազարդը Հայոց եկեղեցու շարժական տոներից է և, ինչպես արդեն ասացինք, նշվում է Զատկից մեկ շաբաթ առաջ ընկնող կիրակի օրը:

Տոնակատարությունը

Ծաղկազարդը նաև ժողովրդական ամենասիրված տոներից է: Տոնից առաջ երեկոյան երիտասարդները ուռենու ճյուղեր էին կտրում և բերում եկեղեցի:

Վառվող մոմերի պայծառությամբ լուսավորված եկեղեցում քահանան օրհնում էր ճյուղերը, որից հետո դրանք բաժանում էին ներկաներին: Մարդիկ այդ ճյուղերը պահում էին տանը, դնում ամբարների և կարասների մեջ, որպեսզի հիվանդությունները վերանան և տարին առատ լինի բերք ու բարիքով:

Ծաղկազարդը շատ էին սիրում հատկապես նորապսակ հարսները: Ամուսնանալուց հետո առաջին անգամ այդ տոնին նրանք գնում էին իրենց հայրական տուն՝ հարազատներին այցելության:

62 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ Ծաղկազարդի օրը հաստատվել է որպես մանուկների օրհնության օր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ծաղկազարդի օրը եկեղեցի մտնելիս ի՞նչն է ուշադրություն գրավում:
2. Ինչո՞ւ է տոնը կոչվում Ծաղկազարդ:
3. Ե՞րբ է նշվում Ծաղկազարդը և ո՞ր տոնից առաջ:
4. Ինչպե՞ս է ժողովուրդը նշում Ծաղկազարդը: Նկարագրե՛ք:
5. Ինչո՞ւ էր այն սիրելի տոն հատկապես նորապսակ հարսների համար:

Հարստացնենք մեր բառապաշարը

Ծաղկազարդ:

Լրացուցիչ նյութ

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

Ծաղկազարդի հաջորդ շաբաթը կոչվում է Ավագ: Այն հիշատակությունն է Երուսաղեմ մտնելուց հետո Քրիստոսի երկրային կյանքի վերջին յոթ օրերի իրադարձությունների և նախապատրաստությունը՝ Քրիստոսի Հարության: Շաբաթը կոչվում է Ավագ, որովհետև ամենամեծն ու նշանակալին է հիշատակվող դեպքերի թե՛ կարևորությամբ և թե՛ խորհրդով: Ինչպես ողջ շաբաթը, այնպես և յոթ օրերից յուրաքանչյուրը բնորոշվում է «Ավագ» անունով: Ավագ շաբաթվա իրադարձությունները ներկայացնում են Հիսուսի՝ հանուն մարդկության սիրո ու փրկության կատարած Ինքնազոհողությունը՝ չարչարանքները, խաչին գամվելը, մահը և թաղվելը: Այդ օրերին եկեղեցին վերապրում է մարդկության անցած ուղին՝ դրախտային երանավետ կյանքից, անհնազանդության անկումից մինչև Քրիստոսի հարությամբ պարգևած փրկության հուսառատ պահը, շնորհն ու օրհնությունը:

«Հայաստան»

63 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

18. Սուրբ Հարություն կամ Զատիկ

Հիսուս Քրիստոսի հարությունը

Այս տոնի նախօրյակին ավարտվում է **Մեծ պահքի** շրջանը, և սկսվում են **Զատիկի** կամ **Քրիստոսի Սուրբ Հարության տոնի** ուրախ նախապատրաստությունները:

Տոնի իմաստը

Վերհիշենք, թե ինչ հանդիսավորությամբ է նշվում Սուրբ Ծնունդը՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան տոնը:

Սուրբ Ծնունդը և Սուրբ Հարությունը եկեղեցու ամենակարևոր տոներն են:

Նոր Կտակարանում ասվում էր, որ խաչելությունից ու մահվանից հետո երրորդ օրը **Հիսուս հարություն առավ**: Խաչի վրա թափված արյամբ և հարությամբ Քրիստոսը մարդկության առջև բացեց փրկության ճանապարհը: Խաչված Հիսուս Քրիստոսի հարություն առնելը բոլոր քրիստոնյաների համար նույնքան կարևոր է, որքան ծնունդը:

Այդ իսկ պատճառով Սուրբ Ծննդյան և Հարության տոները կատարվում են մեծ հանդիսավորությամբ ու ժողովրդական տոնախմբությամբ:

Տոնակատարությունը

Սուրբ Հարությանը կամ Զատկին նախորդող շաբաթ երեկոյան եկեղեցում կատարվում է **Ճրագալույցի** պատարագ: Այդ երեկո և հաջորդ օրերին մարդիկ, հանդիպելով իրար, միմյանց են փոխանցում Հարության ավետիսը՝ ասելով՝ *«Քրիստոս հարյավ ի մեռելոց»* (Քրիստոսը հարություն առավ մահացածներից): Այս խոսքերին հետևում է դիմացինի պատասխանը՝ *«Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»*:

Ճրագալույցի պատարագից հետո ամեն մի ընտանիքում պահքի (պասի) ավարտը նշանավորող տոնական սեղան է բացվում: Սեղանի զարդը Զատկի **կարմիր ձուն** է: Մարդիկ միմյանց տոնի առթիվ կարմիր ներկած ձու են նվիրում:

64 von 90 16.02.2021, 11:04

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ

Զատկի ձուն կարմիր ներկելը խորհրդանշում է խաչի վրա մարդկանց մեղքերի թողության համար Հիսուսի թափած արյունը:

Սուրբ Հարության տոնին առաջներում մատաղ էին անում: Մատաղը բաժանվում էր կիրակի օրը՝ զատկական պատարագից հետո: Այն տրվում էր հատկապես աղքատներին ու կարիքավորներին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Սուրբ Ծնունդը և Սուրբ Հարությունը եկեղեցու ամենակարևոր տոներն են: Ինչո՞ւ:
2. Ուրիշ ինչպե՞ս է կոչվում Սուրբ Հարությունը:
3. Ե՞րբ և ինչպե՞ս էր սկսվում Զատկի տոնակատարությունը:
4. Ինչպե՞ս են մարդիկ ողջունում իրար տոնի օրը:
5. Ի՞նչն է պահքի ավարտը նշանավորող սեղանի զարդը: Ի՞նչ է այն խորհրդանշում:

Հարստացնենք մեր բառապաշարը

Մեծ պահք, Զատիկ:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

19. Համբարձման տոնը

Հիսուս Քրիստոսի համբարձումը

Համբարձումն եկավ, ծաղկունքը ալվան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով:
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխույժ երգերով:

(Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմից)

Տոնի իմաստը

Պոեմում նկարագրված է Համբարձման տոնը:

Խաչելությունից հետո հարություն առնելով՝ Հիսուս Քրիստոս երկրում մնաց ևս քառասուն օր: Այդ ընթացքում հանդիպելով առաքյալներին՝ պատվիրում է նրանց գնալ Ձիթենյաց լեռը: Այստեղ *Հիսուս օրհնում է առաքյալներին, պատվիրում քարոզել, տարածել քրիստոնեությունը: Այնուհետև Նա համբարձվում, բարձրանում է երկինք:*

Երկրից երկինք Հիսուսի փոխադրվելը Նոր Կտակարանում անվանվում է **Համբարձում**:

Համբարձման տոնը Հայոց եկեղեցու **շարժական տոներից է**: Եկեղեցին այն կատարում է Զատկին հաջորդող քառասուներորդ օրը:

Տոնակատարությունները

Համբարձման տոնին նախորդող գիշերը ժողովուրդն անվանում է Համբարձման գիշեր:

Այդ օրն աղջիկները ծաղիկներ էին հավաքում և յոթ աղբյուրից ջուր լցնում մի ամանի մեջ: Հավաքված ծաղիկներով փունջ էին կապում և նրանով ծածկում սափորի բերանը: Գիշերը սափորը դնում էին դրսում, բաց երկնքի ներքո, որ այն ծածկվի Համբարձման գիշերվա ցողով:

66 von 90 16.02.2021, 11:04

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ

Առավոտյան աղջիկները տարբեր բանաստեղծական քառյակներ էին գրում և լցնում այս սափորի մեջ: Այնուհետև նրանք հերթով հանում էին և երգածայն կարդում այդ քառյակներն այն հավատով, թե նրանց մեջ ինչ գրված է, այդ էլ կիրականանա: Ահա այդ պատճառով դրանք կոչվում են **վիճակի երգեր**: Այսինքն, իբրև թե քառյակում գրվածն է վիճակված լինելու դրանք հանող աղջիկներին:

Երջանիկ ապագայի հույսով վիճակ գցելու այս գեղեցիկ սովորույթը ժողովրդի մեջ հայտնի է «Ձան գյուլում» անունով:

Դե հանի՛ր, ա՛ղչի,
Վիճակն ի բարին,
Երգերով գովենք
Էն իգիթ յարին:

կամ

Եկավ Համբարձում
Ծաղկով զարդարված,
Մեր բախտին հարցում.
- Ո՞վ է մեզ գըրված:

(Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմից)

Հարցեր և առաջադրանքներ

1. Բառացի ի՞նչ է նշանակում համբարձվել:
2. Հարություն առնելուց քանի՞ օր հետո Հիսուս Քրիստոսը համբարձվեց երկինք:
3. Ո՞ր տոնին է հաջորդում Համբարձման տոնը:
4. Ինչո՞վ է առանձնանում Համբարձման տոնին նախորդող գիշերը: Ինչպե՞ս է այն կոչվում:
5. Ինչպե՞ս էին աղջիկները նախապատրաստվում Համբարձման տոնին:
6. Ո՞ր երգերն են անվանում վիճակի երգեր:

Հարստացնենք մեր բառապաշարը

Համբարձում, Համբարձման գիշեր, վիճակի երգեր:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

20. Կաթուղիկե Սուրբ Էջմիածնի տոնը

Հայ Առաքելական Եկեղեցու տոնացույցով սահմանված են նաև եկեղեցուն նվիրված տոներ: Դրանցից երկուսը վերաբերում են Սուրբ Էջմիածնի Մայր տաճարին: **Առաջին** տոնը նվիրված է Մայր տաճարի **նավակատիքի*** հիշատակին: Այն **կոչվում է Կաթուղիկե Սուրբ Էջմիածնի տոն**: **Երկրորդը** Ս.Գրիգոր Լուսավորչի տեսիլքին է նվիրված և կոչվում է Շողակաթի տոն:

Գրիգոր Լուսավորչի տեսիլքը

Մայր տաճարը

Մենք արդեն գիտենք, որ 301 թվականին Հայոց երկրում քրիստոնեությունը հռչակվում է պետական կրոն:

Մայրաքաղաք Վաղարշապատում այդ ժամանակ կառուցվում է **Մայր տաճարը**:

Պատմիչ **Ագաթանգեղոսը** գրում է, որ **Խոր Վիրապից** դուրս գալուց հետո **Գրիգոր Լուսավորիչը** 60 օր շարունակ քարոզում և ուսուցանում էր մարդկանց: Քարոզչության վերջին օրը, գիշերով նրան մի տեսիլք է երևում: Երկնքից հայտնվում է Հիսուս Քրիստոսը՝ լույսի չորս սյուների մեջ: Նա իջնում է արքունի պալատի դռան մոտ և մատնացույց անում այն տեղը, որտեղ պետք է հիմնադրվեր Մայր տաճարը: Տեսիլքից որոշ ժամանակ անց Տրդատ III արքան և Գրիգոր Լուսավորիչը **Միածնի իջնելու** վայրում սկսում են կառուցել եկեղեցի: Շինարարությունը տևում է երկու տարի և ավարտվում 303 թվականին:



Ս. Էջմիածին, Մայր տաճար

Կառուցված **եկեղեցին կոչվում է Կաթուղիկե** և բոլոր հայերի համար ընդհանուր, մայր եկեղեցի է: Հետագայում եկեղեցին կոչվեց **Կաթուղիկե Սուրբ Էջմիածին**:

68 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/



Տոնի իմաստը

Կաթուղիկե Սուրբ Էջմիածնի տոնը մեծ իմաստ է պարունակում:

Կաթուղիկե Սուրբ Էջմիածինը Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրն է, մեր եկեղեցու **Մայր Աթոռը**: Նա սրբավայր է և ուխտատեղի բոլոր հայերի համար: Սուրբ Էջմիածինը միավորում է աշխարհասփյուռ հայությանը, նրա համար հանդիսանում որպես հավատի ոգեշնչման մշտական աղբյուր:

Կաթուղիկե Սուրբ Էջմիածնի տոնը Հայ Առաքելական Եկեղեցին նշում է Զատկին հաջորդող 65-րդ օրը:

Լրացուցիչ նյութ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՅՑՈՒՄԸ

Էջմիածնի Մայր տաճարը կառուցվել է ըստ այն տեսիլքի, որին ականատես եղավ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Խոր Վիրապից դուրս գալուց հետո: Ագաթանգեղոսը պատմում է, որ կեսգիշերին, երբ բոլորը խոր քնի մեջ էին, արթուն Լուսավորիչը պայթյունի ձայն է լսում: Հանկարծ երկինքը բացվում է, լույսի շողեր են ճառագում, և լուսեղեն կերպարանքով Աստծու Միածին Որդին, երկնքից իջնելով, կանչում է նրան: Այնուհետև Աստծու Միածին Որդին գետնին գծում է մի սքանչելի եկեղեցու հատակագիծ, մանրամասն ցույց տալիս սյուների տեղերը, կամարների կառուցման ձևը, գմբեթն ու խաչերը: Գրիգոր Լուսավորչի այս տեսիլքի համաձայն՝ կառուցված տաճարը կոչվեց Սուրբ Էջմիածին, այսինքն՝ Միածնի իջած տեղը:



Ս. Էջմիածին, Մեռոնօրհնեք

69 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Հայ Առաքելական Եկեղեցու տոնացույցով որո՞նք են Սուրբ Էջմիածնի Մայր տաճարին նվիրված տոները:
2. Հայաստանում ե՞րբ է քրիստոնեությունը հռչակվել պետական կրոն:
3. Պատմիչ Ագաթանգեղոսը ի՞նչ է մեզ հայտնում Մայր տաճարի կառուցման մասին:
4. Ե՞րբ է ավարտվել Մայր տաճարի շինարարությունը:
5. Հայերի համար ի՞նչ է խորհրդանշում Կաթուղիկե Սուրբ Էջմիածինը:

բ) Յուրացնենք նոր բառերը և հասկացությունները

1. Ի՞նչ է նշանակում նավակատիք:
2. Ո՞ր իրադարձություններին են նվիրված Կաթուղիկե Սուրբ Էջմիածնի և Շողակաթի տոները:

Հարստացնենք մեր բառապաշարը

Կաթուղիկե Սուրբ Էջմիածնի տոն, նավակատիք, Շողակաթի տոն:

Բառարան

Նավակատիք – եկեղեցին բացելու օծման հանդիսավոր արարողությունը:

Էջմիածին – իջավ Միածին Որդին:

70 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

21. Քրիստոսի Պայծառակերպության տոնը: Վարդավառ

Հիսուս Քրիստոսի պայծառակերպությունը

Տոնի իմաստը

Հիսուս Քրիստոսի **Պայծառակերպության** տոնը, որը հայտնի է նաև **Վարդավառ** անունով, Հայոց եկեղեցու հինգ տաղավար տոներից է:

Պայծառակերպություն նշանակում է պայծառ կերպարանք, պայծառ տեսք ունենալ:

Նոր Կտակարանում գրված է, որ *Քրիստոս Հովհաննես, Հակոբոս և Պետրոս առաքյալների հետ բարձրանում է Թաբոր լեռը:* Այստեղ Հիսուս աղոթում է, որից հետո Նրա դեմքը սկսում է փայլել Արեգակի նման, իսկ զգեստները սպիտակում են լույսի պես:

Պայծառակերպվելով՝ Քրիստոս ոչ միայն հայտնում է Իր Աստծու Որդի լինելը, այլև ցանկանում է ասել, որ այդպես պայծառ և լուսավոր կլինեն *բոլոր արդար ու ազնիվ մարդիկ*:

Տոնակատարությունը

Վարդավառի տոնին մեծ ու փոքր, տղամարդ ու կին կժերով, սափորներով և դույլերով իրար վրա ջուր են լցնում: Ասում են, որ ջրային այս խաղերը սկսվել են դեռ ջրհեղեղի ժամանակներից: Հնում այս տոնին ծաղիկներ էին հավաքում, փնջեր կազմում և միմյանց նվիրում: Ամենից պայծառ, հոտավետ ու գեղեցիկ ծաղիկը վարդն է: Այն համարվում է ծաղիկների թագուհին և, ի պատիվ վարդի, տոնը անվանել են Վարդավառ:

Տոնին նվիրված բազմաթիվ ժողովրդական երգեր կան:

Երգերից մեկում ասվում է. «*Վարդն է բացվել Վարդավառի կիրակին*»:

Հայոց եկեղեցին Քրիստոսի Պայծառակերպության տոնը կամ Վարդավառը տոնում է հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

71 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Հարցեր և առաջադրանքներ

Հիշենք

1. Ինչո՞ւ է տոնը կոչվում Պայծառակերպություն:
2. Ո՞րն է տոնի իմաստը:
3. Ի՞նչ է նշանակում Վարդավառ:
4. Ինչպե՞ս է ընթանում տոնակատարությունը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Պայծառակերպություն, Վարդավառ, Թաբոր լեռ:

Լրացուցիչ նյութ

Ինչպես ձմռան ցուրտն ու մռայլությունն է մի պահ ցրվում Տրնդեզի կրակով, այնպես էլ ամառվա շոգն ու տապը՝ Վարդավառին իրար վրա ցանվող ջրով: Վարդավառի ջրային խաղերը հնում սկսվում էին աղավնի թռցնելով: Ինչպես հիշում եք, Նոյի ուղարկած աղավնին վերադարձավ՝ բերելով կտուցին պահած ձիթենու մի ճյուղ: Տեսնելով այդ ճյուղը՝ Նոյը հասկացավ, որ ջրերն աստիճանաբար ցամաքում են:

Ավանդության համաձայն՝ այս տոնը հաստատել է Նոյ Նահապետը: Նա պատվիրել է իր որդիներին տարին մեկ անգամ իրար վրա ջուր լցնել, որպեսզի չմոռանան ջրհեղեղը:

72 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

22. Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը: Խաղողօրհնեք

Վերընթերցե՛ք Հաղորդության խորհրդին վերաբերող դասը:

Մարիամ Աստվածածնի նինջը

Երբ Նոյն իջավ Արարատի գագաթից, նրա առջև բացվեց մի հիասքանչ դաշտ: Այստեղ նա տնկեց խաղողի առաջին որթատունկը:

Աստվածաշունչն այսպես է ներկայացնում խաղողագործության սկիզբը Հայոց աշխարհում:

Խաղողի նշանակությունը մեր ժողովրդի կյանքում այնքան մեծ է, որ նոր հասած խաղողը թույլատրվում է ուտել միայն եկեղեցում օրհնելուց հետո:

Խաղողի օրհնությունը տեղի է ունենում Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնի ժամանակ:

Ինչու է կոչվում Վերափոխման տոն

Խաչի վրա Հիսուս Քրիստոս Հովհաննես առաքյալի խնամքին է հանձնում մորը՝ Մարիամ Աստվածածնին:

Ըստ ավանդության՝ Քրիստոսի խաչելությունից հետո Մարիամը ապրում է ևս տասնհինգ տարի: Այդ տարիների ընթացքում նա Հիսուսին չընդունողների կողմից ենթարկվում է բազում հալածանքների:

Մի օր նրան հայտնվում է Գաբրիել հրեշտակը, որ տարիներ առաջ ավետել էր Հիսուսի ծննդյան մասին: Իսկ այժմ եկել էր հայտնելու, որ շուտով կավարտվի Մարիամի երկրային կյանքը:

Լսելով այս մասին՝ Մարիամը *վերջին անգամ ելնում է Ձիթենյաց լեռը,* ապա վերադառնում տուն: Առաքյալները գալիս են Մարիամին հրաժեշտ տալու, որոնց ներկայությամբ էլ նա մահանում է:

Առաքյալներից Բարդուղիմեոսը ուշանում է հուղարկավորությունից: Նրան մխիթարելու համար որոշում են բացել գերեզմանը, որը գտնվում էր քարայրում: Երբ բացում են, տեսնում են, որ այն դատարկ է: Առաքյալները հասկանում են, որ Մարիամը նույնպես երկինք է բարձրացել: Եկեղեցին Մարիամի երկրային կյանքի վախճանը անվանում է **վերափոխում** բառով, որը նշանակում է վեր փոխվել, վեր փոխադրվել:

73 von 90 16.02.2021, 11:04

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ

Վերափոխումը Հայոց եկեղեցու տաղավար հինգ տոներից է: Այն շարժական է և նշվում է օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը:

Տոնակատարությունները

Վերափոխման տոնին եկեղեցում կատարվում է նաև **խաղողի օրհնությունը**, որից հետո է միայն թույլատրվում խաղող ուտել:

Քրիստոս իրեն համեմատում էր խաղողի վազի՝ որթատունկի հետ: Խաղողից է պատրաստվում նաև գինին: Քրիստոս, Խորհրդավոր (Վերջին) ընթրիքի ժամանակ գինին տալով աշակերտներին, ասաց. *«Այս է իմ արյունը»*: Ահա թե ինչու Հայոց եկեղեցին, օրհնելով խաղողը, խաղողի միջոցով օրհնում է տարվա ամբողջ բերքը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է նշվում Վերափոխման տոնը:
2. Ո՞վ է խաղողագործության սկզբնավորողը Հայոց երկրում:
3. Եկեղեցական ո՞ր տոնի հետ է համընկնում Խաղողօրհնեքը:
4. Ինչպե՞ս է բացատրվում տոնի անունը:
5. Վերհիշե՛ք, թե Հայոց եկեղեցու ո՞ր խորհրդի կատարման ժամանակ է օգտագործվում գինին: Ինչպիսի՞ն պետք է լինի գինին այդ դեպքում:

Հարստացնենք մեր բառապաշարը

Վերափոխում, Խաղողօրհնեք:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Լրացուցիչ նյութ

ՃՌԱՔԱՂ

Աստվածաշունչը պատվիրում է բերքահավաքի ժամանակ այգիների ամբողջ բերքը չհավաքել, այլ մի փոքր մասը թողնել դաշտում՝ աղքատների ու կարիքավորների համար: Ահա թե ինչու ցորենը հավաքելիս արտերի եզրերը չէին հնձում: Նույն ձևով ողկույզներ էին թողնում նաև խաղողի վազերին: Կարիքավորների համար թողնված այս բերքն անվանվում է ճռաքաղ: Ճռաքաղ նշանակում է բերքահավաքից հետո դաշտում թողնված բերքի մնացորդի հավաքումը:

Անվանումն առաջացել է ճիռ բառից. այդպես էին կոչում խաղողի վազի վրա մնացած փոքրիկ ու սակավահատիկ ողկույզները: Դրանք թողնում էին ոչ միայն կարիքավորների, այլև թռչունների ու վայրի կենդանիների համար:

Տիրամոր վերափոխումը

75 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

23. Խաչվերաց

Եթե մեծահասակներին հարցնեք, թե սեպտեմբերի կեսին ի՞նչ հայտնի տոն կա, նրանք կասեն, որ դա **Խաչվերաց** կամ **Սուրբ Խաչի տոնն** է:

Տոնի իմաստը

Խաչվերաց նշանակում է խաչը վեր բարձրացնել: Տոնը նվիրված է երկու կարևոր իրադարձությունների: Քրիստոսի համբարձումից հետո Հակոբոս առաքյալը Երուսաղեմում մի արարողության ժամանակ Հիսուսի խաչափայտը փառաբանելու* համար այն վեր է բարձրացնում: Խաչափայտի հետ կապված մյուս կարևոր իրադարձությունը վերաբերում է Հիսուս Քրիստոսի խաչափայտը գերությունից վերադարձնելուն: 614 թ. պարսից Խոսրով թագավորը գրավում է Երուսաղեմը: Նա ավերում և թալանում է քաղաքը՝ իր հետ տանելով նաև Սուրբ Հարություն տաճարում պահվող Քրիստոսի խաչափայտը:

Մասունքով խաչ

Բյուզանդիայի Հերակլ կայսրը մեծ զորք է հավաքում և 631 թ. սեպտեմբերի 14-ին խաչափայտն ազատում գերությունից:

Խաչափայտի ազատագրմանը մասնակցել է նաև հայկական զորքը: Հերակլ կայսրը, զորքով խաչափայտն ազատելու գնալիս, անցնում է նաև Հայաստանի տարածքով: Նրան մեծապես օգնում են հայոց իշխանները և հատկապես **Սյունյաց Բյուրեղ** իշխանուհին: Երբ Հերակլը թշնամուն հաղթելուց և խաչափայտն ազատելուց հետո ետ է դառնում, ի նշան երախտագիտության, այս իշխանուհուն տալիս է Քրիստոսի խաչափայտից մի մասունք (կտոր):

Խաչքար Նորավանքից
Քանդակագործ՝ Մոմիկ

Հանդիսավոր արարողություններով, ի տես ճանապարհին հավաքված ժողովրդի, խաչափայտը վեր բարձրացնելով՝ Հերակլը այն վերադարձնում է Երուսաղեմի **Սուրբ Հարություն** տաճար:

Ի հիշատակ խաչափայտը վեր բարձրացնելու այս երկու իրադարձությունների՝ տոնը կոչվում է Խաչվերաց, այսինքն՝ խաչի վեր բարձրացում:

76 von 90 16.02.2021, 11:04



ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ

Տոնակատարությունները

Խաչվերացի տոնին՝ երեկոյան ժամերգությունից հետո, հայկական եկեղեցիներում խաչը զարդարում են ռեհանով: Զարդարված խաչը հոգևորականներն ու ժողովուրդը դուրս են հանում բակ և պտտեցնում եկեղեցու շուրջը՝ օրհնելով աշխարհի չորս կողմերը:

Ռեհանով զարդարված խաչը այսպես հանդիսավորությամբ պտտեցնելը խորհրդանշում է Հայոց աշխարհի ծաղկազարդ դաշտերով ու լեռներով խաչափայտը գերությունից հետ դարձնելը:

Խաչվերացը Հայոց եկեղեցու տաղավար հինգ տոներից է և նշվում է սեպտեմբերի 14-ի մոտակա կիրակի օրը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բառացի ի՞նչ է նշանակում խաչվերաց:
2. Ո՞ր իրադարձություններին է նվիրված տոնը:
3. Հայոց ո՞ր իշխանուհին աջակցեց կայսրին և ի՞նչ ստացավ կայսրից՝ ի նշան երախտագիտության:
4. Ինչպե՞ս է կատարվում Խաչվերաց տոնի արարողությունը հայկական եկեղեցիներում: Ի՞նչ է այն խորհրդանշում:
5. Ե՞րբ է նշվում Խաչվերացի տոնը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Խաչվերաց, խաչափայտ, մասունք:

Բառարան

Փառաբանել – մեծարել, փառքի արժանացնել:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Լրացուցիչ նյութ

Մայիս ամսին նշվող կարևոր տոներից է Սուրբ Խաչի երևման տոնը: Այն հիշատակությունն է Երուսաղեմի երկնքում խաչանման լույսի երևման:

351 թ. մայիսի 7-ին՝ ցերեկվա երրորդ ժամին, այսինքն՝ առավոտյան ժամը 9-ին, Երուսաղեմի երկինքը փայլատակում է տերունական Խաչի նշանով, որը հայտնվելով՝ տարածվում է Գողգոթայից մինչև Ձիթենյաց լեռը: Խաչի պայծառ երևումից մթագնում է անգամ արեգակի լույսը: Խաչանշան լույսը երևացել էր դեռևս Քրիստոսի Խաչափայտի առաջին անգամ երևան գալու ժամանակ: Այս անգամ նույնպես Խաչի նշանը Երուսաղեմի երկնքում տեսնում են բազմաթիվ մարդիկ, և շատերը դարձի են գալիս: Երկնային այս հրաշքի առիթով Երուսաղեմի այդ ժամանակվա հայրապետ Կյուրեղ Երուսաղեմցին նամակ է ուղարկում Կոստանդին Բ կայսրին:

Նամակը 5-րդ դարում թարգմանվում է հայերեն և մինչ օրս Ս. Խաչի երևման տոնին կարդացվում է Հայոց եկեղեցիներում:

78 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

24. Վարագա Խաչի տոնը

Ոսկե խաչ՝ մասունքով

Սուրբ մասունքը

Վարագա լեռը գտնվում է Հայաստանի հնագույն մայրաքաղաք Վանի մոտ: Ավանդության համաձայն՝ որոշ ժամանակ այս լեռան վրա են ապաստանել քրիստոնյա կույսեր **Հռիփսիմեն, Գայանեն** և նրանց ընկերուհիները: Հռոմի կայսեր հետապնդումից խուսափելով՝ նրանք հասնում են Հայաստան և ապաստանում Վարագա լեռան վրա:

Հռիփսիմեն իր պարանոցին միշտ կրում էր **Քրիստոսի խաչափայտից մի մասունք**:

Նրանց թաքստոցը շուտով բացահայտվում է: Փախուստի դիմելուց առաջ Հռիփսիմեն մասունքը պահում է լեռան ստորոտում գտնվող քարայրներից մեկում: Սակայն մասունքի տեղը հետագայում մոռացվում է:

Տոնը

Ըստ ավանդության՝ VII դարում Վարագա լեռան քարայրներից մեկում ապրում էին Թոդիկ ճգնավորն ու նրա աշակերտ Հովելը: Նրանք շարունակ աղոթում էին Աստծուն՝ խնդրելով ցույց տալ Քրիստոսի խաչի մասունքի տեղը: Այդ ժամանակ նրանց **մի տեսիլք է երևում**: Երկնքում հայտնվում է լուսեղեն մի խաչ և նրա շուրջը՝ լույսի 12 սյուներ: Ամբողջ Վարագա լեռը լուսավորվում է: Խաչաձև լույսը մտնում է մոտակա եկեղեցին: Երկու ճգնավորները շտապ հասնում են եկեղեցի և Ս. Սեղանի վրա գտնում կորսված **մասունքը**:



Ս. Հռիփսիմե եկեղեցին

Լուրը հասնում է ժամանակի Հայոց կաթողիկոս **Ներսես Գ Տայեցուն** և Հայոց սպարապետ **Վարդ Ռշտունուն**: Նրանք մեծաթիվ բազմության հետ գալիս են Վարագա լեռը և մեծ տոնախմբություն կազմակերպում: Կաթողիկոսը կարգադրում է Հայոց եկեղեցու տոների մեջ ավելացնել **Վարագա Սուրբ խաչի** տոնը՝ ի հիշատակ **Քրիստոսի խաչափայտի մասունքի հայտնաբերման:** Այն

79 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

տեղում, որտեղ երևացել էին լույսի 12 սյուները, կառուցվում է Ս. Նշան եկեղեցին:

Վարագա խաչի տոնը նշվում է սեպտեմբերի 28-ի մերձակա կիրակի օրը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտե՞ղ է գտնվում Վարագա լեռը:
2. Ովքե՞ր էին Հռիփսիմյան կույսերը: Ինչո՞ւ նրանք եկան Հայաստան:
3. Հռիփսիմեն որտե՞ղ էր թաքցրել սուրբ մասունքը:
4. Ինչպե՞ս գտնվեց սուրբ մասունքը:
5. Ովքե՞ր էին այդ ժամանակ Հայոց կաթողիկոսն ու Հայոց սպարապետը:
6. Հայոց կաթողիկոսն ի՞նչ արեց Քրիստոսի խաչափայտի մասունքի հայտնաբերումից հետո:
7. Ե՞րբ է նշվում Վարագա խաչի տոնը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Սուրբ մասունք, Վարագա խաչի տոն, շարական:

Խաչքարեր Գեղարդավանքում

80 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Լրացուցիչ նյութ

Ս. ԽԱՉԻ ԳՅՈՒՏԸ

Ավանդության համաձայն՝ IV դարում Կոնստանտինոս կայսեր մայրը՝ Հեղինեն Երուսաղեմ կատարած ուխտագնացության ժամանակ որոշում է փնտրել և գտնել վաղուց կորած համարվող Ս. Խաչափայտը: Հեղինեին Ս. Խաչի տեղը մատնացույց են անում, բայց մեկի փոխարեն հայտնաբերվում են երեքը: Հիսուսի խաչափայտը դրանցից առանձնանում է կատարված հրաշքի միջոցով, երբ դիպչելով մեռած պատանուն՝ հարություն է տալիս նրան: Այս ժամանակվանից սկսած քրիստոնեական եկեղեցիներում մեծ շուքով նշվում է Գյուտ խաչի տոնը: Հայոց եկեղեցում այն տոնվում է հոկտեմբերի 23-29-ի միջև ընկած կիրակի օրը:

81 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

25. Թարգմանչաց տոնը

Ում է նվիրված տոնը

Յուրաքանչյուր հայ մարդ՝ մեծահասակ թե դպրոցական, գիտի **Ս. Մեսրոպ Մաշտոցի** և **Ս. Սահակ Պարթևի** անունները: Հայ Առաքելական Եկեղեցին նրանց դասել է սրբերի շարքը՝ անվանելով **սուրբ թարգմանիչ վարդապետներ: Սուրբ թարգմանիչ** են անվանվել նաև նրանց աշակերտներ **Եղիշեն, Եզնիկ Կողբացին, Մովսես Խորենացին, Կորյունը, Դավիթ Անհաղթը, Ղազար Փարպեցին** և ուրիշներ, ինչպես նաև **Գրիգոր Նարեկացին ու Ներսես Շնորհալին:**

Գրերի գյուտը

Հայաստանը IV դարի վերջին և V դարի սկզբին գտնվում էր դժվարին դրության մեջ: Չկար հայերեն գիր ու գրականություն: Եկեղեցիներում արարողությունները կատարվում էին ժողովրդին անհասկանալի լեզուներով՝ հունարեն կամ ասորերեն: **Աստվածաշունչը** ևս թարգմանված չէր հայերեն:

Այդ ժամանակ **Մեսրոպ Մաշտոց վարդապետը**, Հայոց **Սահակ Պարթև** կաթողիկոսը և **Վռամշապուհ արքան** ձեռնարկեցին հայոց գրերի ստեղծման ազգանվեր գործը: **405 թվականին** Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց **հայոց այբուբենը**:

Դրանից հետո Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը Հայաստանում բացեցին հայալեզու բազմաթիվ դպրոցներ:



Հայոց այբուբենին նվիրված հուշարձանը Օշականում

Աստվածաշնչի թարգմանությունը

Մաշտոցն ու իր աշակերտները գրերի ստեղծումից անմիջապես հետո կատարեցին հայոց լեզվով առաջին թարգմանությունը: Աստվածաշնչի «Առակներ» գրքից թարգմանված հատվածն սկսվում է **«ճանաչել իմաստությունն ու խրատը,**

82 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

իմանալ հանճարի խոսքերը» նախադասությամբ:

Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի բազմաթիվ աշակերտներ հմտացան թարգմանական գործի մեջ: Իրենց ուսուցիչների հետ նրանք ասորերենից և հունարենից թարգմանեցին Աստվածաշունչը: Աստվածաշնչի թարգմանությունն այնքան կատարյալ էր, որ նրա որոշ մասերը համարվում են «**Թարգմանությունների թագուհի**»: Սուրբ թարգմանիչների շնորհիվ Աստվածաշնչի պատվիրաններն ամրագրվեցին Հայոց հողում: Մեր ժողովրդի համար **քրիստոնեությունը դարձավ ազգային նկարագրի անբաժանելի մասը**:

Թարգմանվեցին անտիկ շրջանի և ժամանակի լավագույն հեղինակների ստեղծագործությունները: Սուրբ թարգմանիչներից շատերը ձեզ հայտնի են առաջին հերթին որպես պատմիչներ: Նրանք են Պատմահայր Մովսես Խորենացին, Եղիշեն, Կորյունը, Ղազար Փարպեցին: Կարճ ժամանակում Հայաստանում մշակույթն այնպիսի ծաղկում ապրեց, որ այդ ժամանակաշրջանը ստացավ **«Ոսկեդար»** անվանումը:

Երբ է տոնը նշվում

Հայ Առաքելական Եկեղեցում **Սուրբ թարգմանիչների կամ Թարգմանչաց տոնը սովորաբար նշվում է հոկտեմբեր ամսին**: Տոնելով սուրբ թարգմանիչների հիշատակը՝ մենք ձգտում ենք արժանին մատուցել նրանց կատարած մեծ գործին:

Տոնի օրը հազարավոր մարդիկ են հավաքվում **Օշական գյուղում** և մեծ հանդիսավորությամբ նշում Թարգմանչաց տոնը: Այստեղ է ամփոփված Մեսրոպ Մաշտոցը: Նրա գերեզմանը գտնվում է **Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու խորանի տակ:** Այն սրբազան ուխտավայր է բոլոր հայերի համար: Օշականում է գտնվում նաև **հայոց այբուբենին նվիրված հուշարձանը:**

Ս. Ներսես Շնորհալի, Ս. Սահակ Պարթև, Ս. Մեսրոպ Մաշտոց և Ս. Մովսես Խորենացի. փորագրություն

83 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ովքե՞ր են Սուրբ թարգմանիչ վարդապետները:
2. Ե՞րբ է ստեղծվել հայոց այբուբենը:
3. Ո՞րն է հայատառ առաջին նախադասությունը:
4. Ինչո՞ւ ենք Աստվածաշնչի հայերեն թարգմանության որոշ հատվածներ անվանում «Թարգմանությունների թագուհի»:
5. Ե՞րբ է նշվում Սուրբ թարգմանիչների տոնը:
6. Որտե՞ղ է գտնվում Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը:
7. Ի՞նչ նշանավոր հուշարձան կա Օշականում:

բ) Առաջադրանքներ

Դասարանում քննարկե՛ք և միասին պարզե՛ք.

ա) Ինչո՞ւ էր անհրաժեշտ ստեղծել հայոց այբուբենը և հայերեն թարգմանել Աստվածաշունչը:

բ) Ի՞նչ նշանակություն ունեցան գրերի գյուտը և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը մեր ժողովրդի համար:

Հարստացնենք մեր բառապաշարը

Գրերի գյուտ, «Թարգմանությունների թագուհի», Սուրբ թարգմանիչների կամ Թարգմանչաց տոն:

Հայոց այբուբենի տառերն ունեն նաև թվային արժեք, ինչպես, օրինակ, Ա=1, Ժ=10, Ճ=100, Ռ=1000 և այլն:

Դրանք միջնադարում կիրառվել են գիտության և մշակույթի բնագավառներում:

84 von 90 16.02.2021, 11:04

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ktqq/

Լրացուցիչ նյութ

ԿՈՐՅՈՒՆԸ ՄԱՇՏՈՑՅԱՆ ԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր: Եվ այնտեղ [Եդեսիայում] շուտով [դրանք] նշանակեց, անվանեց ու դասավորեց ...

Եվ այնուհետև աստվածային գործի մշակությունն անելով՝ սկսեցին ավետարանական արվեստը՝ թարգմանել, գրել և սովորեցնել:

Եվ իսկապես, եկեղեցու սյուներն (նկատի ունի Ս. Պարթևին և Մ. Մաշտոցին) սկսեցին համարձակ ձեռքով Քրիստոսի ավետարանիչների գործը կատարել, Հայաստան ազգի զանազան կողմերը, գավառներն ու տեղերը խումբ-խումբ ուղարկեցին ճշմարտության աշակերտներին, գիտության մեջ կատարելության հասցվածներիս՝ կարող [համարելով] ուրիշներին էլ սովորեցնելու: Նրանց համար կանոն և օրինակ դրեցին իրենց վաստակը և պատվիրեցին նույն կանոնի մեջ մնալ:



Ս. Մեսրոպ Մաշտոց

85 von 90 16.02.2021, 11:04

ԲԱՌԱՐԱՆ

Ալեխռով — ալեկոծված, փոթորկված:
Անապակ — մաքուր, անարատ:
Բաղարջ — առանց թթխմորի պատրաստված հաց:
Բանված — ասեղնագործած:
Բոմբյուն — թնդյուն, դղրդյուն:
Գործող եկեղեցի — օծված եկեղեցի, որտեղ հոգևորականների կողմից կատարվում են տարբեր արարողություններ:
Գոց — փակ, կողպված:
Եկեղեցի օծել — եկեղեցու սյուների, խաչերի, խորանում տեղադրված սեղանի վրա մեռոնով հատուկ արարողություն կատարել: Մեր եկեղեցիների օծումը կատարում է կաթողիկոսը կամ եպիսկոպոսը:
Եկեղեցու վարդապետություն — Աստվածաշնչի և եկեղեցու ուսմունքի վրա հիմնված եկեղեցական ուսուցման և բացատրության ամբողջություն:
Զրահանդերձ — զրահազգեստ:
Էջմիածին — իջավ Միածին Որդին:
Թեմ — եկեղեցու տարածքային-վարչական միավոր:
Ժամերգություն — եկեղեցում օրվա տարբեր ժամերին կատարվող ամենօրյա աղոթքի արարողություն:
Խորհրդավոր — այստեղ՝ անիմանալի, անբացատրելի, խորհուրդ պարունակող:
Ծես — եկեղեցում որոշակի կանոնակարգով կատարվող արարողությունների ամբողջությունը:
Հայել — նայել, մտածել:
Հավատացյալ — քրիստոնեական եկեղեցու հետևորդ:
Մեռոն (մյուռոն) — եկեղեցական արարողությունների ժամանակ օգտագործվող անուշաբույր հեղուկ. պատրաստվում է եկեղեցական հատուկ արարողակարգով:
Նավակատիք — նորակառույց կամ վերանորոգված եկեղեցին բացելու օծման հանդիսավոր արարողությունը:
Նարոտ — կարմիր և սպիտակ թելերի հյուսվածք, որն օգտագործվում է մկրտության արարողության ընթացքում:
Նշխար — հաղորդության համար օգտագործվող հաց՝ կլոր, վրան խաչի պատկերով:
Պատարագ — եկեղեցական արարողություն, որի ժամանակ կատարվում է հաղորդության խորհուրդը:
Սկիհ — պատարագի արարողության ժամանակ օգտագործվող արծաթե կամ ոսկե բաժակ:
Վանք — կուսակրոն հոգևորականների, վանականների համար նախատեսված եկեղեցի-բնակավայր, որի մեջ մտնում են նաև կացարաններ, կրթական, տնտեսական և այլ շինություններ:
Տաղավար — հին ժամանակներում կարևոր տոները մարդիկ նշում էին բնակավայրերից դուրս՝ հյուղակներում կամ խրճիթներում, որոնց տաղավար էին անվանում. այդտեղից էլ «տաղավար տոներ» արտահայտությունը:
Փառաբանել — մեծարել, փառքի արժանացնել:

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ առաջին
Քրիստոնեական եկեղեցի

1. Եկեղեցի 5
2. Քրիստոնեական եկեղեցու հիմնական ուղղությունները 9

Գլուխ երկրորդ
Հայ Առաքելական Եկեղեցի

3. Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետությունը 14
4. Հայ Առաքելական Եկեղեցու վարչական կառույցը 19
5. Հայկական եկեղեցիների կառուցվածքը 23

Գլուխ երրորդ
Հայ Առաքելական Եկեղեցու խորհուրդները

6. Հայոց եկեղեցու խորհուրդները 28
7. Ս. Մկրտություն և Ս. Դրոշմ 30
8. Ապաշխարություն 34
9. Ս. Հաղորդություն 36
10. Պսակ 39

Գլուխ չորրորդ
Հայոց եկեղեցու տոները

11. Ընդհանուր ակնարկ եկեղեցական տոների մասին 42
12. Ավետման և Ծննդյան տոները 45
13. Սուրբ Սարգիս 49
14. Սուրբ Վարդանանց տոնը 52
15. Բուն Բարեկենդան և Մեծ պահք 55
16. Տյառնընդառաջ 58
17 Ծաղկազարդ 61
18. Սուրբ Հարություն կամ Զատիկ 63
19. Համբարձման տոնը 65
20. Կաթուղիկե Սուրբ Էջմիածնի տոնը 67
21. Քրիստոսի Պայծառակերպության տոնը: Վարդավառ 70
22. Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը: Խաղողօրհնեք . . .72
23. Խաչվերաց 75
24. Վարագա խաչի տոնը 78
25. Թարգմանչաց տոնը 81
Բառարան 85

ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ,
ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ, ԱՌԱՔԵԼ ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

6–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատվավոր հեղինակ՝
Վ. Գ. Դևրիկյան — *բանասիրական գիտությունների դոկտոր*

Լեզվական խմբագիր՝ Ա. Ոսկանյան
Սրբագրիչ՝ Ա. Պապյան
Տեխնիկական խմբագիր՝ Մ. Պետրոսյան
Համակարգչային շարվածքը՝ Հ. Հովհաննիսյանի
Ա. Միրզաթունյանի

Պատվեր՝ 1034: Տպաքանակ՝ 38051:
Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: 5.5 տպ. մամուլ:
Տառատեսակը՝ Arial Armenian, ArTarumianMatenagir:

Տպագրված է **«Տիգրան Մեծ»** հրատարակչություն ՓԲԸ տպարանում